ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
2. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
3. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
4. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
5. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով	17.06.2024թ. N ԱԺՀ.7/2792-2024
Առողջապահության ոլորտի վիճակագրությունն ունի վերանայման անհրաժեշտություն: Սոցիալ-ժողովրդագրական հատվածի «5.2. Առողջապահություն» բաժինն ամբողջական չէ: Այն ունի վարակային հիվանդությունների և	**Չի ընդունվել:** Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (Օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական

թունավորումների բաժին, ինչպես նաև աղյուսակ՝ հիվանդությունների ցուցակային (ագրեգատիվ) հաշվառման: Այդ աղյուսակներում հիվանդությունները, որոնք գերակշռում են ՀՀ քաղաքացիների մոտ բացակայում են: Դրանց մասին տեղեկությունները տեղակայված են լինում Առողջապահության նախարարության ծրագրերով թողարկվող Տարեգրքերում: Տարեգրքերի տեղեկատվությունները ավելի վաղ՝ մեկ տարի ետ ժամանակահատվածի տեղեկատվություններ են լինում: Արդյունքում՝ ամբողջական գնահատել առողջապահության ոլորտը չի ստացվում, քանի որ Վիճակագրական կոմիտեի և Առողջապահության նախարարության տվյալները որոշակի դեպքերում տարբերվում են միմյանցից:	վիճակագրության հիմքը վիճակագրական ծրագրերն են» (Ծրագրեր): Ըստ այդմ, Առողջապահության նախարարության (Նախարարություն) կողմից առողջապահության ոլորտի, այդ թվում խնդրո առարկա տեղեկություններն Արմստատին տարեկան հաճախականությամբ ներկայացվում են համաձայն Ծրագրերի, (տե՛ս օրինակ՝ 2024 թվականի վիճակագրական ծրագրի Մաս 6-ի «6.2.Առողջապահության նախարարություն» հատվածը, էջ 196): 2022թ.-ի խնդրո առարկա վիճակագրական ցուցանիշները հարապարակված են «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2022 թվականին» վիճակագրական ժողովածուում (տե՛ս soc_sit_2022_9 (armstat.am) հղումը, էջ 196), որոնք նույնական են Նախարարության կողմից հրապարակվող համապատասխան ցուցանիշների հետ և, հետևաբար, դրանց միջև լրացուցիչ համապատասխանեցման խնդիր առկա չէ:
6. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
7. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
8. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի Պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	

9. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
10. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատն'''ության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
11. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
12. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
13. Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ	
Չի ներկայացվել	
14. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	

15. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
16. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ	16.07. 2024թ. N 02/08.86/24372-2024
Նախագծով նախատեսվում է, որ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը **նորմատիվ բնույթ** կրող ենթաօրենսդրական իրավական ակտով հաստատելու է 2025 թվականի վիճակագրական ծրագիրը, մինչդեռ չնայած այն հանգամանքին, որ օրենքով վերոնշյալ խորհրդին վերապահված է համապատասխան ծրագիրը հաստատելու իրավասություն, այնուամենայնիվ հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինների ցանկում, որոնք իրավասու են ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, վերոնշյալ խորհուրդն առկա չէ: Նշված հարցին անդրադառնալով՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը « (...) **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունվել միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից,** այլ կերպ ասած, ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասության հասցեատերերի ցանկը սպառիչ է. այդ մարմիններն են՝ Կառավարությունը (Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մաս), կառավարության անդամները (Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս), ինքնավար մարմինները (Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մաս), համայնքի ավագանին (Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական	**Ընդունվել է ի գիտություն:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեն հանդիսանում է պետական կառավարման համակարգի մարմին, հետևաբար և Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով նշված «նախատեսված մարմին», որի լիազորությունները սահմանվում են Պաշտոնական վիճակագրության մասին օրենքով (այսուհետ՝ Օրենք): Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կառավարման բարձրագույն մարմինը ՀՀ վիճակագրության պետական խորհուրդն է, որին էլ համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետով սահմանված դրույթի, վերապահված է ընդունել վիճակագրության վերաբերյալ նորմատիվ և անհատական բնույթի որոշումներ:

հանձնաժողովը (Սահմանադրության 194-րդ հոդվածի 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (Սահմանադրության 200-րդ հոդվածի 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 3-րդ մաս):	
17. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ	
Չի ներկայացվել	
18. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ	
Չի ներկայացվել	
19. Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	01.08.2024թ. N //26435-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
20. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	10.07.2024թ. N 42//23355-2024
1. Նախագծում պետական կառավարման համակարգի մարմինների անվանումները սահմանել ***«Պետական կառավարման համակարգի մասին»*** օրենքին համապատասխան, մասնավորապես՝ ՄԱՍ 1-ի 23-րդ կետի 3-րդ սյունակում «Հայաստանի Հանրապետության	**1. Ընդունվել է մասամբ:** Նախագծի 1-ին մասի (Պաշտոնական վիճակագրությունն ըստ տնտեսության հատվածների, ենթահատվածների և ոլորտների) «1.4.Աշխատանքի շուկա» գլխի աղյուսակի 23-րդ

պետական եկամուտների կոմիտեի» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեի» բառերով, իսկ «1.5 ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ» բաժնի 1-ին կետի ***«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի»*** բառերը՝ ***«Պետական եկամուտների կոմիտեի»*** բառերով:	կետի 2-րդ սյունակում «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի» բառերը փոխարինվել է «Պետական եկամուտների կոմիտեի» բառերով: Ինչ վերաբերում է «1.5 ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ» գլխի աղյուսակի 1-ին կետի խմբագրմանը, ապա առաջարկությունն ընդունելի չէ, քանզի Վիճակագրական կոմիտեի հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը (Հարթակ) 2024թ. փետրվարի 1-ից գործարկվել է Արմստատի կողմից և վերաբերում է բացառապես Արմստատի կողմից հավաքվող տեղեկությունների կառավարման համակարգին:
2. Նախագծի ՄԱՍ 2-ի «2.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)» բաժնի 4-րդ կետում «մասնավոր տնային տնտեսություններ (***15-49 տարեկան կանայք***, մինչև 15 տարեկան երեխաներ)» ձևակերպումը փոխարինել «մասնավոր տնային տնտեսություններ (***15-49 տարեկան իգական սեռի ներկայացուցիչներ***, մինչև 15 տարեկան երեխաներ)» ձևակերպմամբ:	**2. Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
3. Նախագծում «Գլխավոր դատախազություն» և «ՀՀ մարդու իրավունքների պաշտպան» պետական մարմինների անվանումները համապատասխանաբար սահմանել որպես «ՀՀ դատախազություն»՝ հիմք ընդունելով «Դատախազության մասին» օրենքը և «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ»՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը:	**3. Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

4. Նախագծի ՄԱՍ 7-ի «271»-րդ տողում վերանայել «7.34 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»-ի, իսկ «281»-րդ տողում՝ ««7.36. «ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տեղակայումը՝ հաշվի առնելով, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ***ոչ առևտրային կազմակերպության*** և «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» ***հիմնադրամի*** կարգավիճակը:	**4. Ընդունվել է ի գիտություն:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
21. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	01.08.2024թ. N ԱԱ/19/22511-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
22. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն	02.08.2024թ. N 01/15238-2024
1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024թ.-ի փետրվարի 1-ից գործարկվել է Պաշտոնական վիճակագրական հաշվետվությունների հավաքման առցանց հարթակը (ՀԱՐԹԱԿ) և դադարեցվել է հաշվետվությունների՝ էլեկտրոնային փոստի միջոցով հավաքման գործընթացը, ինչպես նաև հաշվի առնելով որոշ վիճակագրական տվյալներին (մասնավորապես՝ Ձև 1-ԱՐՏ հաշվետվություններին) ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հասանելիության անհրաժեշտությունը՝ կապված ոլորտային առանձնահատկությունների հետ, առաջարկում ենք 2025 թվականի վիճակագրական ծրագրի Մաս 1-ի «1.2 Արտադրություն» ենթամասի «1.2.1 Արդյունաբերություն» բաժնի 121001, 121002 ծածկագրերով Ձև	**1. Չի ընդունվել:** Արմստատն էկոնոմիկայի նախարարությանը Հարթակին մուտքի հնարավորություն չի կարող տրամադրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված «Վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման» սկզբունքի համաձայն: Ըստ որի, պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով:

1-ԱՐՏ հաշվետվություններին **Նախարարությանը տալ մուտքի հնարավորություն**:	Վերջինս խարսխված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վիճակագրական հանձնաժողովի կողմից 1994 թ.-ի ապրիլի 14-ին ընդունված (29.01.2014թ. ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից վերահաստատված, 68/261-րդ Բանաձև) ՄԱԿ-ի «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից» 6-րդ սկզբունքի վրա, ըստ որի՝ «Վիճակագրական տեղեկատվության պատրաստման համար վիճակագրական գերատեսչությունների կողմից հավաքագրվող անհատական տվյալները, անկախ այն հանգամանքից, թե դրանք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետք է կրեն խիստ գաղտնի բնույթ և օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակների համար»:
2. Նախագծի «1.2.2 Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն» կետի 122002 աշխատանքի ծածկագրի շրջանակում տրամադրվող «Պտղատու այգիների, հատապտղանոցների (ներառյալ ջերմոցներ և ջերմատներ) և խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնի մեջ պտուղ և հատապտուղների վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորության դեպքում ներկայացնել նաև ըստ առանձին հիմնական մշակաբույսերի և ըստ մարզերի, մասնավորապես հնդավորներ՝ խնձորենի, տանձենի, սերկևիլենի և այլն, կորիզավորներ՝ ծիրանենի, դեղձենի, նեկտարենի, սալորենի, բալենի ու կեռասենի և այլն, ընկուզապտուղների՝ ընկուզենի, տխիլենի, նշենի, պիստակենի:	**2. Չի ընդունվել:** ՀՀ-ում 2024թ. հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) անցկացման ժամանակ հավաքվելու են գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի, ըստ առանձին տեսակների, միայն ցանքատարածությունների և տարածությունների վերաբերյալ տվյալներ, որոնք արտացոլված են ՀՀ կառավարության 23.05.2024թ. N 730-Ն որոշմամբ հաստատված 2024թ. հերթական ԳՀՀ ծրագրում (հարցաշարում): ԳՀՀ-ով, ըստ միջազգային մեթոդաբանության, չի նախատեսվում հավաքել տեղեկություններ մշակաբույսերի արտադրության և բերքատվության ծավալների մասին: ԳՀՀ-ի հիմնական

	արդյունքների հրապարակումը նախատեսված է 2026թ.-ին, հետևաբար խնդրո առարկան չի առնչվում «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին: Ընդ որում, Ձեր կողմից հայցվող բազմամյա տնկարկների տարածություններն ըստ հնդավորների, կորիզավորների, մերձարևադարձայինների, ընկուզապտուղների և դրանց առանձին տեսակների ցուցանիշները նախատեսվում է հրապարակել ԳՀՀ արդյունքներով:
3. Նախագծի 1.2.2 (Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն) կետի «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնում ներկայացնել նաև կորիզավոր և հնդավոր պտղատեսակների վերաբերյալ տեղեկատվության բացվածքը՝ ներառելով ծիրանենու, դեղձենու, սալորենու, կեռասենու, խնձորենու և տանձենու վերաբերյալ առանձնացված տվյալներ:	**3. Տե՛ս 2-րդ կետի պարզաբանումը:**
23. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	21.06.2024թ. N /10.1.3/24747-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
24. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	06.08.2024թ. N 1111/41010-24
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	

25. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն	31.07.2024թ. N 1/01.4/8215-2024
1. Առաջարկվում է հավաքագրել և հրապարակել հետևյալ տեղեկատվությունը. 1) ցուլերի, ավանակների, ջորիների, գոմեշների, ճագարների, բրոյլերների, հնդկահավերի և մորթատու գազանների քանակը,	**1. Չի ընդունվել:** **1)** ՀՀ-ում տարեկան հաճախականությամբ հունվարի 1-ի դրությամբ իրականացվող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի համատարած հաշվառման շրջանակում ՀՀ բոլոր համայնքները և անասնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններն Արմստատին տրամադրում են տեղեկություններ նաև ցուլերի, ավանակների, ջորիների, գոմեշների, ճագարների և մորթատու գազանների գլխաքանակի վերաբերյալ: Արմստատը, ըստ անհրաժեշտության, պատրաստ է Շրջակա միջավայրի նախարարությանը դրանք տրամադրել: Միաժամանակ, տեղեկացվում է, որ 2024թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման շրջանակում նախատեսվում է հավաքել և հրապարակել տեղեկություններ հիշյալ տեղեկության կտրվածքով:
2) օգտագործված պարարատանյութերի և թունաքիմիկատների քանակը,	**2)** Սույն տեղեկությունը վարչական ռեգիստրի գործառույթ է, որի տնօրինման պարագայում Արմստատը կներառի Նախագծում:
3) տարբեր արտադրությունների ժամանակ օգտագործվող հումքատեսակների, այդ թվում երկրորդային հումքատեսակների քանակը,	**3)** Տե՛ս 2-րդ ենթակետի պարզաբանումը:

4) աղբավայրերի, դրանց տարածքների, աղբի քանակը,	**4)** Արմստատը գրությամբ դիմել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (ՏԿԵՆ) «աղբավայրերի, դրանց տարածքների, աղբի քանակի» վերաբերյալ տեղեկության տրամադրման վերաբերյալ աշխատանքային քննարկում կազմակերպելու նպատակով, որին ի պատասխան ՏԿԵՆ-ը իր պատրաստակամությունն է հայտնել:
5) տրանսպորտային միջոցների մասին, այդ թվում՝ • տրանսպորտային միջոցների քանակն ըստ կատեգորիաների և ըստ վառելանյութերի, • տրանսպորտային միջոցների վազքն ըստ կատեգորիաների և ըստ վառելանյութերի, • ուղևորություններն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, • ուղևորության երկարությունն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, • տրանսպորտային միջոցների շահագործման տևողությունն ըստ կատեգորիաների, • տրանսպորտային միջոցների սեփականատերերի թիվը, • երթևեկության արագությունն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի: Ջրավազանային կառավարման պլանների մշակման համար անհրաժեշտ է լինում կիրառել խոշորացված համայնքների վերաբերյալ տվյալները, ուստի՝ հնարավորության դեպքում, խնդրում եմ ներառել մարզերը թվերով հրապարակումների համապատասխան տեղեկատվությունն ըստ համայնքների:	**5)** Նման վիճակագրական հաշվառում/գրանցում չի իրականացվում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք վարչական հաշվառման գործառույթներ են և չեն հետապնդում վիճակագրական նպատակ:

2. Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը 2024 թվականի հունվարի 1-ից ստանձնել է ամբողջովին նոր գործառույթներ իրականացնելու լիազորություններ, մասնավորապես՝ պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողության իրականացման գործառույթներ: Ծառայությունը նոր գործառույթները լիարժեք կիրականացնի էկոպարեկային ծառայողների ամբողջական համալրումից հետո: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Ծառայության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ վիճակագրական տվյալների ներկայացման նպատակով՝ Ծառայության համար ընդունել նոր վիճակագրական ամփոփ հաշվետվության ձև:	**2. Չի ընդունվել:** Արմստատի և Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության համապատասխան մասնագետների հետ կստեղծվի համատեղ աշխատանքային խումբ՝ առաջարկները քննարկելու նպատակով:
26. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	02.08.2024թ. N 01/21/23335-2024 /
1. ՀՀ-ում բարձրագույն կրթությունը երկաստիճան է, իսկ բժշկական մասնագիտությունների ուսուցումն իրականացվում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով, որի արդյունքում շնորհված կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին: Նշվածի համատեքստում առաջարկում ենք Նախագծի Մաս 1-ի 5-րդ կետի «5.5. Կրթություն և գիտություն» ենթակետի 65-րդ՝ «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը» և	**1. Չի ընդունվել:** Հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ ամփոփ տեղեկություններն Արմստատն ստանում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (Կենտրոն)՝ ամբողջացված, միջազգային չափանիշներին համապատասխանող հանրակրթության վարչական ռեգիստրից:

66-րդ՝ «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը» բաժիններում հավաքագրվող տվյալների հաշվետվային ձևերում սովորողների, ընդունվածների և շրջանավարտների թվաքանակների մասով ավելացնել նոր տող/սյունակ՝ «այդ թվում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորողների, ընդունվածների, շրջանավարտների» ըստ սեռերի և մասնագիտությունների:	Համաձայն ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին» թիվ 65-Ն հրամանի՝ կրթության ոլորտի վարչական ռեգիստրի ամբողջականացման նկատառումից ելնելով, պետք է, որպեսզի կրթության ոլորտի (ներառյալ՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների), այդ թվում՝ առաջարկվող ցուցանիշների հավաքումը և, ըստ այդմ, վարչական ռեգիստրի ընդլայնման գործառութն իրականացնել Կենտրոնի իրավասությունների շրջանակում: Ընդ որում, հարկ է նշել նաև, որ խնդրո առարկա ցուցանիշների պաշտոնական վիճակագրության շրջանակում հրապարակման պարագայում հնարավոր է ուղղակի կամ անուղղակի բացահայտել ռեսպոնդենտի անվանական տեղեկությունները, օրինակ՝ այդպիսի ցուցանիշները, պետական ԲՈՒՀ-երի շրջանակում առկա են միայն Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: Ըստ այդմ, Արմստատի կողմից հիշյալ տեղեկությունների հավաքումը և դրա հասանելության ապահովումը հնարավոր չէ իրականացնել՝ հաշվի առնելով Օրենքի, մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները, համաձայն որոնց՝ պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողները մշակում, արտադրում և տարածում են ՀՀ պաշտոնական վիճակագրությունը՝ համաձայն նույն հոդվածով

	նախատեսված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների և այլ համաձայնեցված վիճակագրական սկզբունքների: Իսկ «Վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման» սկզբունքի համաձայն՝ պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով: Ավելին «Անվանական տվյալների» հասկացությունը սահմանված է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում և 23-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որոնց՝ անվանական տվյալները, որոնց վրա տարածվում է վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման սկզբունքը, այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակի կամ անուղղակի նույնականացնել վիճակագրական միավորները՝ դրանով բացահայտելով անվանական տեղեկություններ: Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն՝ «Վիճակագրական նպատակներով հավաքված անվանական տվյալները չպետք է օգտագործվեն որևէ մարմնի կամ միջազգային կազմակերպության կողմից՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց առնչվող հետաքննության, նախաքննության, վերահսկողության, դատաքննության,

	վարչական որոշումների կայացման կամ նմանատիպ այլ գործընթացներում:»: Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողներն ապահովում են անվանական տվյալների, գաղտնի ագրեգացված ցուցանիշների և վիճակագրության պաշտպանությունը, ինչպես նաև վիճակագրության պաշտպանությունը մինչև դրա տարածումը, և ձեռնարկում են անհրաժեշտ կարգավորիչ, վարչական, տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ կանխելու այդպիսի տվյալներին հասանելիությունը լիազորություն չունեցող անձանց կողմից: ԿԳՄՍՆ համակարգում վարչական ռեգիստրի ընդլայնման գործընթացի ավարտից հետո, Արմստատն ընդհանրապես կդադարեցնի այդ հաստատություններից կրթությանն առնչվող տեղեկությունների հավաքումը և որպես տեղեկատվության աղբյուր կօգտագործի վարչական ռեգիստրի տվյալները: Հակառակ պարագայում, Արմստատը մշտապես դատապարտված է լինելու պահպանելու Օրենքի «Վիճակագրական գաղտնիության բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործելու հիմնարար սկզբունքի» պահանջները և չհրապարակել իր կողմից ուղղակիորեն հավաքված անվանական և/կամ ուղղակի կամ անուղղակի բացահայտման հնարավորություն տվող տվյալները: Միաժամանակ, Արմստատը պատրաստակամ է հիշատակված վարչական ռեգիստրի ձևավորման/

	ընդլայնման և վարչական նպատակով ձևաթղթերի և մեթոդական ցուցումների կազմման աշխատանքներին ցուցաբերել մեթոդաբանական օժանդակություն:
2. Նախագծի Մաս 1-ի 5-րդ կետի «5.5. Կրթություն և գիտություն» ենթակետի 63-րդ՝ «Բարձրագույն մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» և 64-րդ՝ «Բարձրագույն մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» բաժինների վերնագրերը համապատասխանաբար փոխարինել «Բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» և «Բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» բառերով, քանի որ բարձրագույն կրթություն իրականացնում են ուսումնական հաստատությունների տարբեր տեսակներ, այդ թվում՝ գիտական կազմակերպությունները:	**2. Ընդունվել է մասամբ:** Խնդրո առարկա բաժինների վերնագրերը փոխարինվել են «Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» և «Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը» բառերով՝ հաշվի առնելով «Կրթության մասին» օրենքի հոդված 3-ի 20)-րդ, 21)-րդ, 22)-րդ, 25)-րդ մասերով, ինչպես նաև «Կրթության ազգային դասակարգչով» սահմանված եզրույթները:
3. Ի շարունակություն նախորդ կետի՝ 63-րդ և 64-րդ բաժինների տվյալները փոփոխված հաշվետվային ձևերով դեռևս չեն հրապարակվել, և հստակ չէ, թե արդյոք դրանք ներառում են բարձրագույն կրթության և՛ առաջին, և՛ երկրորդ աստիճանների (այդ թվում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) հանրագումարային արժեքները: Եթե տվյալները վերաբերում են միայն բարձրագույն կրթության առաջին աստիճանին (բակալավրիատ), ապա վերնագրում անհրաժեշտ է համապատասխան նշում՝	**3. Չի ընդունվել:** Խնդրո առարկա տեղեկությունները հրապարակված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-մարտին» վիճակագրական տեղեկատվական ամսական զեկույցում (տե՛ս՝ հղման 305 և 314 էջերի բաժինների վերնագրերը և համապատասխան ցուցանիշները):

տարընկալումներից խուսափելու համար: Եթե տվյալները հանրագումարային են, առաջարկում ենք առանձին ամփոփ աղյուսակներ ներառել նաև առաջին աստիճանի մասով (քանի որ երկրորդի մասով առանձին բաժիններ կան՝ 65-րդը և 66-րդը):	Նշված հրապարակման համար տեղեկությունները հավաքվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2020թ. փետրվարի 27-ի թիվ 06-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 3-գմ (տարեկան), ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2020 թ. փետրվարի 27-ի թիվ 07-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 3-գմ-1 (տարեկան), ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. դեկտեմբերի 24-ի թիվ 80-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-գմ (տարեկան) և «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-գմ-1 (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների ձևերի միջոցով: Ըստ այդմ, խնդրո առարկային վերաբերող հավաքված տեղեկությունները, որոնց հենքով արտադրվել, մշակվել և տարածվել է համապատասխան պաշտոնական վիճակագրությունը, ներառում է բարձրագույն մասնագիտական կրթության և՛ առաջին, և՛ երկրորդ

	աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների վերաբերյալ տեղեկությունները:
4. Նախագծի Մաս 1-ի 5-րդ կետի «5.5. Կրթություն և գիտություն» ենթակետի 68-րդ բաժնում ներկայացված «Գիտատեխնիկական աշխատանքներ» բառերը փոխարինել «Գիտական և գիտատեխնիկական գործունեություն» բառերով, քանի որ գիտությանն առնչվող և գիտական գործունեությունը կարգավորող իրավական ակտերում ոլորտը ձևակերպված է որպես «Գիտական և գիտատեխնիկական գործունեություն»: Բացի վերոնշյալը, «գիտատեխնիկական» եզրույթը չի ընդգրկում գիտության բնագավառում իրականացվող գործունեությունների ամբողջ շրջանակը:	**4. Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
5. «Թանգարանների գործունեության մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 48-Ն որոշման հավելված 1-ի բաժին 5-ից անհրաժեշտ է հանել թանգարանների էքսկուրսավարների որակավորման կարգերը (501.1, 501.2, 501.3 ծածկագրերը): 2024 թվականի հուլիսի 29-ին հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Թանգարանային աշխատողների մասնագիտական անվանացանկը և մասնագիտական որակավորման չափանիշները սահմանելու մասին» N 44-Լ հրամանը:	**5. Ընդունվել է:** Խնդրո առարկա վիճակագրական հաշվետվության ձևի առաջիկայում իրականացվելիք փոփոխությունների շրջանակում ներկայացված առաջարկը ևս կներառվի համապատասխան հաշվետվական ձևի փոփոխության վերաբերյալ նախագծում:

6. Նախագծի Մաս 1-ի 5-րդ կետի «5.6. Մշակույթ և սպորտ» ենթակետի 72-րդ բաժնում հավաքագրվող տվյալների հաշվետվային ձևում մարզիկների թիվը ներկայացնել նաև ըստ տարիքային խմբերի՝ «0-5 տարեկան», «6-18 տարեկան» և «18-ից բարձր»:	**6. Ընդունվել է ի գիտություն:** Սույն առաջարկի մասով, հաշվի առնելով ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության խնդիրը, կնախաձեռնվի քննարկում խնդրո առարկա հաշվետվությունը ներկայացնող ռեսպոնդենտների հետ, որի արդյունքում որոշում կկայացվի առաջարկվող ցուցանիշների ներառման հնարավորության մասին:
7. Հաշվի առնելով, որ մշակվել և շրջանառվում է «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է երիտասարդների տարիքային շեմի փոփոխություն (13-35 տարեկան), առաջարկում ենք՝	**7.**
1) Նախագծի Մաս 1-ի 5-րդ կետի «5.4. Իրավական վիճակագրություն» ենթակետի 47-րդ բաժնում հավաքագրվող «Դատապարտվածների թիվն ըստ տարիքային խմբերի» տվյալներում «30-49» տարիքային խումբը ներկայացնել «30-35» և «36-49» բաշխումներով:	**1) Ընդունվել է ի գիտություն:** Խնդրո առարկա օրենքի ընդունման պարագայում Արմստատը դատապարտվածների համար առաջարկվող տարիքային խմբերի բաշխման հնարավորությունը կքննարկի համապատասխան վարչական ռեգիստր վարող մարմնի՝ ՀՀ դատական դեպարտամենտի հետ, ինչի արդյունքում որոշում կկայացվի խնդրո առարկայի Արմստատի հրապարակումներում ներառելու հնարավորության վերաբերյալ:
2) «Միգրացիոն պատկերը ՀՀ-ում» հետազոտության հետագա հրապարակումներում «Բնակչության բաշխումն ըստ տարիքային կառուցվածքի» մասում «6-14» և «15-24» տարիքային խմբերը փոխարինել համապատասխանաբար «6-18» (որպես	**2) Ընդունվել է մասամբ:** Արմստատի վիճակագրական հրապարակումներում, ներկայացվող տարիքային խմբերից զատ, կներառվեն նաև առաջարկվող տարիքային խմբերով աղյուսակային տվյալներ:

պարտադիր կրթության տարիք) և «19-24» տարիքային խմբերով, իսկ «25-62» տարիքային խումբը՝ «25-35» և «36-62» տարիքային խմբերով:	
27. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն	18.07.2024թ. N ՊՆ/510/7648-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
28. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	08.08.2024թ. N ՆՄ/ԱՀ/25151-2024
Ձեր գրության կապակցությամբ հայտնում եմ, որ «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի փաթեթի «Սոցիալական ապահովության մասին» բաժնի 37-րդ կետով ներկայացվող «Որդեգրման մասին» հաշվետվության ներկայացման հաճախականությունն առաջարկում ենք կիսամյակից փոխել տարեկան հաճախականության՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիսամյակային ձևաչափով ներկայացվող հաշվետվության մեջ հնարավոր է որոշակի տվյալների կորուստ: Մասնավորապես, առաջին կիսամյակում ավարտված դատական գործի վճիռը երկրորդ կիսամյակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու դեպքում, երբ տեղեկատվական համակարգ վճռի մասին մուտքագրումն իրականացվում է երկրորդ կիսամյակում, ապա ոչ առաջին, ոչ երկրորդ կիսամյակի հաշվետվությունների մեջ տվյալ մուտքագրումների մասին տեղեկատվություն հաշվետվություններում չի երևում, քանի որ	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: 2024թ. հուլիսի 1-ի 40-Ա որոշմամբ «Որդեգրման մասին» վիճակագրական հաշվետվության ձևում իրականացվել են փոփոխություններ: Նշված փոփոխությունները պայմանավորված էին ոլորտի վիճակագրության արդիականացման և Հարթակին համապատասխանեցման հետ: Խնդրո առարկա փոփոխությունների վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով Արմստատն իր 04.04.2024թ. թիվ ՎԿ/2-03/728-2024 և 11.06.2024թ. թիվ ՎԿ/2-03/1003-2024 գրություններով դիմել էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (Նախարարություն): Նշված գրություններին ի պատասխան Նախարարությունը խնդրո առարկա հաշվետվության ներկայացման հաճախականության հետ կապված որևէ

տեղեկատվական համակարգի հաշվետվությունները ներբեռնվում են կոնկրետ տրված ժամանակահատվածի համար:	առարկություն չի ներկայացրել, ըստ այդմ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը խնդրո առարկայի վերաբերյալ ընդունված համապատասխան որոշման մեջ հաշվետվության ներկայացման հաճախականության փոփոխություն չի նախատեսել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ոլորտի վիճակագրության որակի և ամբողջականության հարցը նշյալ հաշվետվության ներկայացման հաճախականության փոփոխության գործընթացը կիրականացվի առաջիկայում:
29. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	
Չի ներկայացվել	
30. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	01.08.2024թ. N ԳՍ/15.2/24671-2024 /
1.«2025 թվականի վիճակագրական ծրագիր» նախագիծը քննարկելով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետ (Ընկերություն) առաջարկվում է, որ Նախագծի Մաս 6-ի 6.10. կետի 147 ենթակետի Էլեկտրական էներգիայի արտահանման և ներմուծման մասին (Ձև 2 (ամսական)) հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանել մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 18-ը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացման հետ կապված մեծացել են էլեկտրաէներգետիկական ցուցանիշների հավաքագրման և հաշվարկման ծավալները, ինչպես նաև Ընկերությունը Ձև 1 (ամսական)	**1. Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

և Ձև 2 (ամսական) հաշվետվությունները ներկայացնում է մեկ փաթեթով և հաշվետվություններում ներառված են նույնատիպ տվյալներ, որոնք հաճախ օբյեկտիվորեն հասանելի չեն Ընկերությանը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը: **ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ** 2. Ծրագրի «Մաս 1»-ի 5.1.3 «Բնակչության թվաքանակը» բաժնի 513007 և 513008 ծածկագրերի տակ նշված են վիճակագրական աշխատանքներ, որոնք վերաբերվում են 2022թ. մարդահամարի արդյունքների հիման վրա ժողովրդագրական մի շարք ցուցանիշների վերահաշվարկի իրականացում, սակայն հետաքրքիր է թե ի՞նչ մեթոդաբանությամբ և ի՞նչ սկզբունքով են իրականացվում նման վերահաշվարկները:	**2. Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի 1-ին մասի «5.1.3. Բնակչության թվաքանակը» բաժնի 513007 և 513008 ծածկագրերով վիճակագրական աշխատանքները, որոնք վերաբերում են ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների հիման վրա ՀՀ, մարզերի և ք.Երևանի մշտական բնակչության թվաքանակի և սեռատարիքային կազմի, ինչպես նաև այդ հիմքով ժողովրդագրական մի շարք ցուցանիշների վերահաշվարկներին, միջազգային մեթոդաբանությամբ ընդունված գործընթացներ են, որոնք իրականացվում են յուրաքանչյուր մարդահամարից հետո: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության ընթացիկ հաշվառմամբ ձևավորված և մարդահամարի արդյունքով ստացված մշտական բնակչության թվաքանակների միջև առաջանում են շեղումներ՝ պայմանավորված միջմարդահամարային տասնամյակի ընթացքում ձևավորված տարբերություններով: Այդ տարբերությունները պայմանավորված են ինչպես բնակչության վարչական տվյալներում առկա շեղումներով, այնպես էլ մարդահամարի արդյունքներով ստացված

	բնակչության թվաքանակի կառուցվածքային (մշտապես ներկա և ժամանակավոր բացակա) փոփոխություններով: Այդ իսկ նկատառումով, բնակչության թվաքանակների միջև ձևավորված տարբերությունը համամասնորեն բաշխվում է ըստ միջմարդահամարային տարիների՝ 2011-2022թթ.: Ստացված վերահաշվարկված բնակչության թվաքանակների հիման վրա, ժողովրդագրական այն ցուցանիշները, որոնք հաշվարկվում են բնակչության թվաքանակի, դրա այս կամ այն տարիքի կամ տարիքային խմբի նկատմամբ, նույնպես ենթարկվում են վերահաշվարկի: Այս գործառույթի հիմնական նպատակն է ապահովել վիճակագրական ցուցանիշների համեմատելի շարժընթաց: Վերահաշվարկված տվյալների հրապարակման հետ մեկտեղ, սահմանված կարգով կներկայացվեն նաև վիճակագրական պարզաբանումներ:
3. Ծրագրի «Մաս 1»-ի 8. «Գյուղատնտեսական համատարած հաշվառում» բաժնում 80001 ծածկագրի տակ նշված վիճակագրական աշխատանքը նախատեսում է «2024թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի մեքենայացված մշակում», հետաքրքիր է՝ թե ե՞րբ են հրապարակվելու ԳՀՀ վերջնական արդյունքները:	**3. Ընդունվել է ի գիտություն:** 2024թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման վերջնական ամփոփ արդյունքները նախատեսվում է հրապարակել 2026 թ. չորրորդ եռամսյակում:
4. Ծրագրի «Մաս 3»-ի «Պաշտոնական վիճակագրության արտադրողների կողմից հրապարակվող վիճակագրական հրապարակումներ» բաժնում 1000-103 ծածկագրի տակ նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի	**4. Չի ընդունվել:**

սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ» առանձին (թվով 11 անուն) հրապարակումներ, մասնավորապես՝ Լոռու մարզի մասով նույնպես: Ողջունում ենք նման հրապարակման հնարավորությունը, քանի որ առանձին մարզի մասով մարզերի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների հրապարակումը (2020-2024թթ.) կարող է շատ օգտակար լինել գնահատականներ տալու և ծրագրերի մշակման առումով: Վերոնշյալի առնչությամբ առաջարկում ենք մարզերի վերաբերյալ հնարավորության սահմանում ներառել նաև հետևյալ ցուցանիշները. 1) 2020-2024թթ. մարզում արտաքին ապրանքաշրջանառության (արտահանում, ներմուծում) ծավալների վերաբերյալ տեղեկատվություն	**1)** Սույն տեղեկության սկզբնաղբյուրը Պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայությունն է, որը վարում է մաքսային վարչական ռեգիստրը, որից Արմստատը վիճակագրական նպատակներով ստանում է արտաքին և փոխադարձ առևտրի վերաբերյալ միայն ամփոփ տեղեկություններ, առանց մարզերի տարանջատման:
2) 2020-2024թթ. մարզում ստեղծված նոր ձեռնարկությունների և աշխատատեղերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն	**2)** Նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները եռամսյակային և տարեկան հաճախականությամբ, հակիրճ մեթոդաբանական պարզաբանումներով, հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային թողարկումների «Աշխատատեղեր» ենթաբաժնում և «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուի «11. Աշխատատեղեր» բաժնում:

	Նախատեսվում է խնդրո առարկա ցուցանիշները հետայսու հրապարակել նաև «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածուի «Աշխատանքի շուկա» հատվածում: Նոր ստեղծված տնտեսավարողների քանակի և գործող տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակի վերաբերյալ տեղեկություն հրապարակվում է նաև «Փոքր ու միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագրում (տե՛ս https://armstat.am/am/?nid=82&id=2615 հղման 12-13 և 28-29 էջերը), որոնցում ներառված են «Տնտեսության ոչ ֆինանսական բիզնես հատվածի» բոլոր տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները: Առաջարկություններն ընդունելի չեն նաև այն հիմնավորմամբ, որ վիճակագրական արտադրանքների արտադրության, մշակման ու տարածման գործընթացներում չափազանց կարևոր է Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վիճակագրական գաղտնիքի սկզբունքի պահպանումը, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ներկայացուցչականության ապահովումը: Մասնավորապես, հայցվող դեզագրեգացիայի մակարդակում վիճակագրական ցուցանիշների հրապարակումը կարող է առաջացնել վիճակագրական գաղտնիքի բացահայտում, քանզի որոշ դեպքերում այն ներառում է/կարող է ներառել 1-3 միավորներից բաղկացած ագրեգացված ցուցանիշներ, որտեղ միավորը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է և այդ միավորներից

	մեկը հնարավոր է անուղղակիորեն նույնացնել՝ այդպիսով բացահայտելով այդ միավորի մասին տեղեկությունները:
3) Գործող ձեռնարկություններում աշխատողների թվաքանակը (ըստ ոլորտների և տարածաշրջանների)	**3) Տե՛ս 2-րդ ենթակետի պարզաբանումը:**
4) 2020-2024թթ. մարզի տնտեսական ցուցանիշները (ըստ ոլորտների):	**4)** Արմստատը տարեկան հաճախականությամբ հրապարակում է «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածուն (տե՛ս 2023թ.-ի հրապարակումը՝ https://armstat.am/am/?nid=82&id=2616 հղմամբ), ինչպես նաև ՀՀ յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վիճակագրական ժողովածուները (տե՛ս 2023թ.-ի հրապարակումները՝ https://armstat.am/am/?nid=651 հղումներով): Դրանցում ՀՀ մարզերին և Երևան քաղաքին առնչվող վիճակագրական ցուցանիշները ներկայացվում են ըստ տնտեսության առանձին ոլորտների՝ 5 տարվա շարժընթացով: Ինչ վերաբերում է 2023թ.-ի վիճակագրական ցուցանիշներին, ապա համաձայն «2024 թվականի վիճակագրական ծրագրի», հիշյալ ժողովածուները, որոնցում առկա են լինելու 2023թ.-ի ցուցանիշները, հրապարակվելու են ս.թ. նոյեմբեր ամսին, իսկ 2024թ.-ի նախնական ցուցանիշները հրապարակվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում (տե՛ս https://armstat.am/am/?nid=82 հղման ներքո):

31. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	31.07.2024թ. N 01/6-2/16070-2024
1.Նախագծին վերաբերող, ՀՀ ֆինանսների նախարարության համար կարևորություն ներկայացնող, հարցերի վերաբերյալ դիրքորոշում ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի» նախագծի շրջանակներում (2023թ. հուլիսի 17-ի թիվ 01/6-2/14134-2023 գրություն (կցվում է)), որտեղ ներառված հիմնական կետերը շարունակում են մնալ արդիական (մասնավորապես՝ սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների հնարավորինս օպերատիվ հրապարակման անհրաժեշտությունը, «Ծախսեր-թողարկում» աղյուսակի և չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակումը): Հետևաբար, առաջարկում ենք հնարավորության պարագայում Նախագծում անդրադառնալ վերը նշված գրությամբ ներկայացված առաջարկներին:	**1. Չի ընդունվել:** Դեռևս «2019 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը (2019թ. նախագիծ) մշակելիս, Արմստատը հաշվի առնելով Պետական եկամուտների կոմիտեի (Կոմիտե) 10.08.2018թ. թիվ 01/7-1/45970-18 և Կենտրոնական բանկի (ԿԲ) 15.08.2018թ. թիվ 10.3-07/000487-18 գրություններով ներկայացված առաջարկությունները՝ փոփոխեց վիճակագրական տեղեկություն տրամադրողների (ռեսպոնդենտների) կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների հավաքման ժամկետները՝ պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների կողմից գործող ժամկետներում Արմստատին ներկայացվող վիճակագրական ցուցանիշների հաշվառման և ամփոփման բազում օբյեկտիվ պատճառներով ճշգրիտ տվյալների ներկայացման դժվարություններով (հաշվի առնելով այն մեկնաբանությունները, որ Կոմիտեին ներկայացվող հաշվետվությունների ժամկետը սահմանված է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը) և որպես դրա հետևանք՝ խնդրանքով, երկարաձգել Արմստատ ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների ժամկետները: Դրանով էր պայմանավորված, որ այդ 2019թ. նախագծում «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» ամսական

	հաճախականությամբ հրապարակվող մամուլի հաղորդագրության հրապարակման օր սահմանվեց հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 30-րդ օր՝ 20-րդ օրվա փոխարեն (տե՛ս https://armstat.am/file/doc/99531343.pdf հղումը), «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրապարակման օրը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 40-րդ օրը՝ 30-րդ օրվա փոխարեն, քանի որ ռեսպոնդենտների կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետները քննարկման ներկայացված 2019թ. նախագծով նախատեսվել էր ենթարկել փոփոխության, այն է՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ օրվա փոխարեն նախատեսել 15-րդ օրը: Սակայն, հաշվի առնելով Կոմիտեին գրությամբ ներկայացված մտահոգությունն առաջարկվող ժամկետներում խնդրո առարկա ցուցանիշների հրապարակման վերաբերյալ, ինչպես նաև վիճակագրական հրապարակումների ժամկետների երկարաձգման հետ կապված վիճակագրական տեղեկություն օգտագործողների գերակշիռ մասի պատասխան-գրություններով առարկությունների բացակայությունը, այդուհանդերձ Արմստատն, ընդառաջ գնալով ընտրեց միջանկյալ տարբերակ, այն է՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» ամսական հաճախականությամբ հրապարակվող մամուլի

	հաղորդագրության հրապարակման օր նախատեսել հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-րդ օրը՝ քննարկման ներկայացված Նախագծով նախատեսվող 30-րդ օրվա փոխարեն, իսկ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրապարակման օրը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 35-րդ օրը՝ քննարկման ներկայացված Նախագծով նախատեսվող 40-րդ օրվա փոխարեն: Հարկ է նշել, որ ռեսպոնդենտների կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետները նույնպես ենթարկվեցին փոփոխության, այն է՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ օրվա փոխարեն սահմանվեց 10-րդ օրը:
2. Առաջարկում ենք նաև Նախագծով նախատեսել ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող բոլոր տվյալների թվային շարքերի Excel ֆորմատով հասանելիության ապահովման միջոցառումներ: Մասնավորապես՝ կիրառման տեսանկյունից արդյունավետ կլինի ՀՀ ՎԿ կայքում ունենալ նաև ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը ներկայացնող հրապարակումներում ներառված բոլոր ցուցանիշների թվային շարքերը: Միաժամանակ առաջարկում ենք Excel ֆայլերը հրապարակել կիրառման տեսանկյունից հարմարավետ տեսքով, մասնավորապես՝ առանց վանդակների միավորման (merged cells), ինչպես նաև պահպանել տվյալների բազաներում հրապարակվող Excel ֆայլերի անվանման անընդհատությունը (օրինակ՝ ՀՆԱ-ի, ՏԱՑ-ի բազաների Excel ֆայլերի անվանումները ամեն հրապարակումից հետո	**2. Ընդունվել է ի գիտություն:** Այդ աշխատանքներն ընթացքում են և կրում են շարունակական բնույթ:

փոփոխվում են): Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ ՎԿ կայքից տվյալների ներբեռնման և վերլուծության ինքնաաշխատ համակարգերի ներդրման և արդյունավետ գործարկման հանգամանքով: 3.Նախագծի Մաս 1-ի 1.3 «Գներ և Սակագներ» բաժնի 1.3.5՝ «Շինարարության գների և ինդեքսներ» ենթահատվածում կիրառվում են ինդեքսներ, որոնք տրամադրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և հաշվարկվում են բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ ամսական ինդեքսների հիման վրա: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի «Պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 472-Ն որոշման կարգի 16-րդ կետի համաձայն՝ տեխնիկական հատկանիշների, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության հիման վրա և նախարարությունը պատասխանատվություն չի կրում դրանց ճշտության համար: Այդ իսկ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ հաշվարկվող ամսական ինդեքսների հիման վրա կատարված հաշվարկները ոչ միշտ կարող են ճշգրիտ կերպով արտացոլել պատկերը, քանի որ տվյալ ինդեքսները հաշվարկվում են «Շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների» հիման վրա:	**3. Չի ընդունվել:** Խնդրո առարկայի վերաբերյալ նոր կարգի ընդունումից հետո, երբ կհստակեցվի նաև «Շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների» և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկների պատասխանատու մարմինը, Նախագծում կիրականացվեն անհրաժեշտ փոփոխություններ:

Հայտնում ենք, որ պետական կարիքների համար ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով տեղեկությունների հավաքագրման, ինչպես նաև պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման և հրապարակման գործընթացում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ • Շինարարական ապրանքներ ներմուծող կամ արտադրող կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը չի հսկվում պետական մարմինների կողմից և հաճախ գնացուցակում կտրուկ տատանման հետևանքով առաջացնում են մի շարք խնդիրներ: • Գնային տեղեկատվություն տրամադրող ընկերությունների համար չկա սահմանված որևէ օրենսդրական ակտ, որի հիման վրա կազմակերպությունները պարտավորվում են յուրաքանչյուր ամիս (կիսամյակ / տարի) ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել կողմնորոշիչ գներ: Այս հանգամանքով պայմանավորված ընկերությունների տվյալ ցանկից դուրս գալու պարագայում, առկա է ռիսկ, որ տվյալ ապրանքի գծով գնառաջարկ չներկայացվի: • Հնարավոր են դեպքեր, երբ կազմակերպությունները փոխհամաձայնության գալով արհեստականորեն բարձրացնեն ապրանքատեսակի գինը, որը նույնպես ակնհայտ կոռուպցիոն ռիսկ է ենթադրում, որը սակայն ֆիզիկապես հնարավոր չէ վերահսկել: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել է նախագիծ, որի ընդունման արդյունքում կազատականացվի ոլորտը և ՀՀ ֆինանսների նախարարության	

կայքէջում (minfin.am) յուրաքանչյուր ամիս հրապարակվող շինարարական նյութերի / ապրանքատեսակների գների վերաբերյալ տեղեկատվության փոխարեն հնարավոր կլինի կիրառել շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալներն ու գները՝ հիմնավորող փաստաթղթերով: Միաժամանակ, հնարավորություն կտրվի լիազոր մարմնին մշակելու ներկայիս գործող համակարգից սկզբունքորեն տարբերվող նոր համակարգ, որը առավելագույնս կարտացոլի շուկայական տնտեսության պայմաններում գների ձևավորման մոտեցումները՝ հիմք ընդունելով շուկայի զարգացման տեմպերն ու դինամիկ աշխարհում թվային տեխնոլոգիաների ու նորարարությունների կիրառման անհրաժեշտությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք խմբագրել Նախագիծը: Ստորև կցվում է նաև «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի» նախագծի (2024-2028թթ. նախագիծ) շրջանակներում (2023թ. հուլիսի 26-ի թիվ 01/6-2/14134-2023 գրությունը:	
1. Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է իրականացնել ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի և շարժընթացի հետընթաց վերանայման աշխատանքներ: Այս կապակցությամբ առաջարկում ենք մեծ ծավալի վերանայումներ իրականացնելիս վիճակագրական կոմիտեի կայքէջում հրապարակել նաև իրականացված վերանայումների ընդգրկման ժամանակաշրջանի	**1. Ընդունվել է ի գիտություն:** Դա ընդհանրապես ընդունված պրակտիկա է ինչպես ԱՀՀ-ի ցուցանիշների հիմնական վերանայումների պարագայում, այնպես էլ Արմստատի կողմից իրականացվող այլ վերանայումների ժամանակ:

և վերանայումների իրականացման պատճառների մասին տեղեկատվություն՝ օգտվողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: 2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բնակչության սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները (օր.՝ աղքատությունը, Ջինիի գործակիցը և այլն) հրապարակվում են տարվա երկրորդ կեսին կամ տարեվերջին, մինչդեռ բյուջետային գործընթացի շրջանակներում դրանք ունեն առանցքային նշանակություն՝ բնակչության սոցիալական պատկերը գնահատելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար: Հատկապես խոսքը վերաբերում է բյուջեի տարեկան հաշվետվություններին, որոնք ԱԺ են ներկայացվում մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը: Այդ փուլում նախորդ տարվա սոցիալական պատկերը ճիշտ հասկանալու, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցություններն առավել համապարփակ գնահատելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ նախորդ տարվա սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ: Հետևաբար, առաջարկում ենք հաշվարկել և հրապարակել դրանք (առնվազն նախնական տարբերակով) առավել օպերատիվ կերպով՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլ ամիսը:	**2. Չի ընդունվել:** Արմստատի կողմից Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությամբ (ՏՏԿԱՀ) հավաքվող տվյալների ստուգաճշտումը, համադրումը, վերլուծումն ու ամփոփումը ժամանակատար և մանրակրկիտ աշխատանք պահանջող գործընթաց է և, ըստ այդմ, խնդրո առարկա աշխատանքի իրականացման ժամկետը հաշվի է առնում Արմստատում ժամանակի, մարդկային ռեսուրսների գործադրման ողջամիտ պայմաններ՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները: Ավելին, ընդառաջ գնալով խնդրո առարկա ցուցանիշների հրապարակման հաճախականությանը միտված Ֆինանսների նախարարության առաջարկին և գնահատելով խնդրո առարկայի շուրջ Համաշխարհային բանկի փորձագետի հետ համատեղ իրականացվող աշխատանքների ծավալն ու ժամանակատարությունը, նախատեսված աշխատանքի ամփոփ արդյունքներն ինֆոգրաֆիկ պատկերավորմամբ Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակվել են 2024թ.-ի հուլիս ամսին՝ 2023թ.-ի վիճակագրական ծրագրով նախապես նախատեսված նոյեմբեր ամսվա փոխարեն (տե՛ս https://armstat.am/file/doc/99549093.pdf հղումը):

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Ֆինանսների նախարարություն» բաժնի «31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում» միջոցառման կատարման շրջանակներում կարևորում ենք ՀՀ ՎԿ կողմից ստորև ներկայացված տեղեկատվության հրապարակումը.	**3. Չի ընդունվել:** Նախորդ տարի Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված առաջարկություններին ի պատասխան տրված Արմստատի պարզաբանումները (կցվում են)՝ կապված «Ծախսեր-թողարկում» աղյուսակների և չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակման հետ այժմեական են նաև հիմա:
1) **«Ծախսեր-թողարկում» աղյուսակ:** Սույն աղյուսակի հրապարակումը կարևորվում է ՀՀ հարկային ներուժի և ճեղքի առավել ճշգրիտ ու ընդգրկուն գնահատականներ ստանալու և հարկային համակարգի հիմնական խոցելի կողմերի բացահայտման ու որոշակի ճշգրտող գործիքակազմի կիրառման միջոցով հարկային համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համատեքստում: Հարկ ենք համարում ընդգծել, որ հարկային ներուժի և ճեղքի գնահատման հաշվարկներում «Ծախսեր-թողարկում» աղյուսակի առանձին բաղադրիչների ներառման կարևորությունը մատնանշվում է նաև տնտեսագիտական գրականությունում առկա ուղենշային հանդիսացող մի շարք աղբյուրներում:	**1) Չի ընդունվել:** Արմստատը բարձր է գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Ֆինանսների նախարարություն» բաժնի «31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում» միջոցառման իրականացմանն ուղղված ջանքերը, և այդ համատեքստում նույնպես կարևորում է «Ծախսեր-թողարկում», այդ թվում՝ «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակների առկայությունը: Ինչպես հայտնի է վերջիններիս կառուցման աշխատանքներում Ասիական Զարգացման Բանկի (այսուհետ՝

	ԱՋԲ) Գիտելիքի և օժանդակության տարածաշրջանային տեխնիկական աջակցության (KSTA 9624 & 9646-REG) ծրագրի շրջանակում 2019թ. հոկտեմբերից Արմստատին ԱՋԲ-ի կողմից տրամադրվում է տեխնիկական աջակցություն, մասնավորապես դրանցից առաջինը (KSTA 9624-REG) ներառում է ռեսուրսներ-օգտագործում աղյուսակների (SUT) կազմումը, իսկ երկրորդը (KSTA 9646-REG) միտված է տնտեսական վերլուծության և առանձին վերցրած կոնկրետ ոլորտների վերաբերյալ քաղաքականության իրականացման աջակցությանը՝ ծախսեր-թողարկում աղյուսակների (IOT), զբոսաշրջության արբանյակային (սատելիտային) հաշիվների կազմման և գլոբալ արժեքի շղթայի վերլուծության (GVC) միջոցով:Ներկայում կազմվել են 2017թ.-ի «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակները, որոնք դեռևս չեն կարող հրապարակվել պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքներ են տարվում նաև 2018թ.-ի աղյուսակների կազմման ուղղությամբ, որի ընթացքում ճշգրտումներ են իրականացվում նաև 2017թ.-ի «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակներում: Խնդրո առարկա աղյուսակների պարբերական հենքով կազմումն իր աշխատատարությամբ և ժամանակատարությամբ անհնար է դարձնում առկա ռեսուրսներով այդ աշխատանքների իրականացումը:
2) **Չդիտարկվող տնտեսության գնահատականներ:** Հարկային պոտենցիալի հաշվարկներում որոշակի դեր ունեն նաև չդիտարկվող տնտեսության գնահատականները:	**2) Չի ընդունվել:** Չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակման առնչությամբ ներկայացված

Մասնավորապես, ներկայումս ՀՀ ՖՆ կիրառվող՝ ՀՀ ֆինանսների նախարարի ս.թ. ապրիլի 27-ի 193-Լ հրամանով հաստատված մեթոդաբանությունը ներառում է ՀՆԱ հաշվարկի հիմքում ընկած չդիտարկվող և ստվերային տնտեսության NACE դասակարգմամբ ոլորտային գնահատականների օգտագործում, որը ներկայումս ստացվում է ՀՀ ՎԿ-ին առանձին ուղղվող նամակների միջոցով: Հետևաբար, կարևոր ենք համարում այդ ցուցանիշի պարբերական (առնվազն՝ տարեկան) հրապարակումը, ինչը ոչ միայն առավել օպերատիվ կդարձնի հարկային պոտենցիալի գնահատումները, այլ նաև կարևոր կլինի ինչպես այդ գնահատումների, այնպես էլ՝ ընդհանրապես վիճակագրության թափանցիկության տեսակետից:	առաջարկությունը չի ընդունվում. Այդ հաշվարկների իրականացումը և ՀՆԱ-ում դրանց ներառումն իհարկե բարելավում է ազգային հաշիվների ցուցանիշների ամբողջականությունը և որակը, սակայն այդ տվյալների հրապարակումը չի նախատեսվում և չի խրախուսվում ինչպես ԱՀՀ մեթոդաբանությամբ, այնպես էլ ԱՄՀ-ի ՏՏՀՍ-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ գնահատականներն իրականացվում են անուղղակի եղանակներով՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ և գնահատման մեթոդներ, այդ թվում՝ փորձագիտական, բացի այդ դրանց հրապարակումը կարող է հասարակության տարբեր շերտերի շահարկումների (այդ թվում՝ քաղաքական) առիթ հանդիսանալ: Ելնելով վերոհիշյալից Արմստատը չդիտարկվող տնտեսության գնահատականների վերաբերյալ տվյալները տրամադրում է Արմստատին ուղղվող նամակների միջոցով՝ ներքին օգտագործման համար:
4. ՀՀ տնտեսության ներկա վիճակը վերլուծելու և գնահատելու նպատակով խնդիր է առաջացել ուսումնասիրել և վերլուծել պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ) թվաքանակը և շարժը, ուստի առաջարկում ենք հավաքագրել և հրապարակել տեղեկատվություն՝ պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված ձևաչափի:	**4. Չի ընդունվել:** Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը իր բովանդակությամբ դասվում է վարչական բնույթի տեղեկությունների շարքին, որոնց վերաբերյալ հաշվառումների իրականացումը դուրս է Օրենքով և վիճակագրական ծրագրերով սահմանված Արմստատի գործառույթների շրջանակից: Նշված տեղեկությունների գրանցում/հաշվառում և դրանց հիման վրա վարչական

Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ համապատասխան աղյուսակում առաջարկվում է կատարել հետևյալ լրամշակումները՝ Տրամադրել տեղեկություններ հետևյալ կտրվածքով՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ առանձնացնել «ռեզիդենտների կողմից գրանցված», «ոչ ռեզիդենտների կողմից գրանցված, այդ թվում ՌԴ քաղաքացիների կողմից գրանցված», ինչպես նաև առաջարկվում է աղյուսակում ավելացնել սյունակներ, որտեղ համապատասխան տեղեկություններն առանձնացված կլինեն ամսական կտրվածքով:	տեղեկատվական շտեմարաններ վարող պետական լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է, որին էլ առաջարկվում է դիմել՝ խնդրո առարկա տեղեկատվության ստացման նպատակով:
5. Հաշվի առնելով, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող տվյալների բազաներում բացակայում են որոշակի տվյալներ, որոնք կարող են ավելի արդյունավետ դարձնել ֆիսկալ ռիսկերի կառավարումը՝ առաջարկում ենք Նախագծով մշակել նաև ստորև ներկայացված ուղղություններով տեղեկատվության հրապարակման բարելավմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝	**5.**
1) կանաչ պարտատոմսերի թողարկման ծավալների վերաբերյալ տեղեկատվություն՝ հաշվի առնելով, որ մի շարք գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով աշխատանքային անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել և տեղեկատվություն հավաքագրել ՀՀ-ում մասնավոր հատվածի կողմից թողարկվող կանաչ պարտատոմսերի ծավալների մասին, որոնք առկա չեն մեկ ամբողջական տեղեկատվական հարթակում,	**1) Չի ընդունվել:** Մասնավոր հատվածի պարտատոմսերի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը ԿԲ-ն է, որը նման հաշվառում չունի:

2) կլիմայական ռիսկերից բխող աղետների մասշտաբների և վնասների (նյութական և ֆինանսական) վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հավաքագրվում է համապատասխան լիազոր մարմինների կողմից,	**2) Չի ընդունվել:** Ներքին գործերի նախարարությունը Արմստատին է տրամադրում ՀՀ կառավարության 10.11.2011թ. N 1582-Ն որոշման համաձայն ստեղծված մարզային հանձնաժողովների կողմից արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների վերաբերյալ կազմված ակտերի ամփոփ տվյալները: Տեղեկությունն ամբողջական չէ և վարչական ռեգիստրի ձևավորման պարագայում հնարավոր կլինի ամբողջական տեղեկություններ ստանալ գնահատված վնասների վերաբերյալ:
3) ջերմոցային գազերի արտանետումների ծավալներն ըստ ոլորտների՝ 2018 թվականից սկսած:	**3) Ընդունվել է ի գիտություն:** Ջերմոցային գազերի արտանետումն ըստ ոլորտների և նյութերի (CO2 համարժեքով) ցուցանիշի աղբյուր հանդիսանում է Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ), որը վարում է Ջերմոցային գազերի կադաստրը և երկամյա հաճախականությամբ հրապարակում համապատասխան զեկույցը, ինչի հիման վրա Արմստատի տվյալների բազայում հրապարակվում են համապատասխան ցուցանիշները, այդ թվում՝ ՇՄՆ-ի կողմից նախորդ տարիների ցուցանիշների վերանայումները (տե՛ս https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb հղումը): Վերջին հրապարակումը, որը հասանելի է Արմստատին, ներառում է 2019թ. ցուցանիշները:

	2025թ.-ին նախատեսվում է, որ ՇՄՆ-ի Ջերմոցային գազերի կադաստրում կիրապարակվեն 2020-2021թթ.-ի ցուցանիշները: Միաժամանակ, հարկ է նշել, որ ի օժանդակություն նշված աշխատանքների, Արմստատը ներդրել է նոր վիճակագրական ամփոփ հաշվետվության ձև «Ջերմոցային գազերի արտանետումների մասին» (Ձև 1-ՋԳ/երկամյա), որն ընդգրկվել է «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծում:
32. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն	02.08.2024թ. N 43/2/130337-24
Վիճակագրական ծրագրի մաս 6-ի 6.7.2 բաժնի 107-րդ կետում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից ներկայացվող հաշվետվությունների ցանկում դեռևս առկա է վիճակագրական ծրագրի մաս 1-ի 5.4. կետի «Իրավական վիճակագրություն» բաժնի 52-րդ կետում նշված «Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող հանցագործությունների մասին դիմումների և հաղորդումների քննարկման վերաբերյալ» Ձև 2Մ կիսամյակային հաշվետվությունը՝ չնայած այն հանգամանքին, որ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով ՀՀ ՆԳՆ ոստիկանությունն այլևս քրեական վարույթ նախաձեռնելու, հանցագործությունների մասին դիմումներ և հաղորդումներ քննարկելու իրավասությամբ օժտված չէ, ուստի հնարավոր չէ կազմել և տրամադրել Ձև 2Մ հաշվետվությունը:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Նշված կետը հանելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է նաև «2024 թվականի վիճակագրական ծրագրի նախագծի» վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության առաջարկություններում:	
33. Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	
Չի ներկայացվել	
34. Հայաստանի Հանրապետության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն	
Չի ներկայացվել	
35. Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայություն	
Չի ներկայացվել	
36 Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայություն	
Չի ներկայացվել	
37. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	
Չի ներկայացվել	

38. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե	
Չի ներկայացվել	
39. Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե	
Չի ներկայացվել	
40. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	18.07.2024թ. N 8/464
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
41. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն	
Չի ներկայացվել	
42. Պետական եկամուտների կոմիտե	
Չի ներկայացվել	
43. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե	07.08.2024թ. N ՍԹ/11945-2024
Հստակ չէ, թե Նախագծի «ՄԱՍ 14»-ով ներկայացված միջոցառումները բովանդակային առումով ինչ գործողությունների կատարում են ենթադրում և տվյալների հավաքագրման ինչ մեթոդ է	**Ընդունվել է մասամբ:** Նախագծի 14-րդ մասում ներկայացված են միայն միջոցառումների անվանումները և դրանց կատարման

կիրառվելու, հետևաբար՝ առաջարկում ենք ներկայացնել որոշակի հստակեցումներ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում տրամադրելու հնարավորություն ունենալու նպատակով: Բացի այդ, հարկ ենք համարում ընդգծել, որ 5-րդ, 6-րդ, 10-րդ կետերում արձանագրված գյուղատնտեսական նշանակության շենքերի ու շինությունների առկայության, գյուղատնտեսական հողատեսքերի, տարածությունների, ցանկատարածությունների վերաբերյալ տվյալների գրաֆիկական պատկերների պատրաստման աշխատանքների կատարման կապակցությամբ պարզ չէ՝ արդյո՞ք այդ միջոցառումների շրջանակներում ենթադրվում է, որ Կադաստրի կոմիտեի կողմից պետք է տրամադրվեն որոշակի տեղեկություններ, թե՝ ոչ: Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 16-ի N 600-Ն որոշմամբ «գյուղատնտեսական նշանակության շենքեր և շինություններ» հասկացություն սահմանված չէ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ հայտնում ենք, որ Նախագծի վերաբերյալ ամբողջական կարծիք հնարավոր կլինի տրամադրել Նախագծով ներկայացված «ՄԱՍ 14»-ով սահմանված աշխատանքների բովանդակությունը հստակեցնելու պարագայում:	ժամկետները, որոնք իրականացվելու են Արմստատի կողմից: Գրաֆիկական պատկերների պատրաստման աշխատանքները պետք է իրականացվեն միայն Գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում հավաքված տվյալների հիման վրա: Ինչ վերաբերում է «գյուղատնտեսական նշանակության շենքեր և շինություններ» բառերին, ապա դրանք փոխարինվել են «գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր, շինություններ» բառերով:
44. Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	
Չի ներկայացվել	

45. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	25.07.2024թ. N 01/14.1/10990-2024
1. Նախագծի «ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» բաժնի՝ «Տվյալ ծածկագրի համար 1-ին մասում նշվում են. 1) սյունակ 3՝ վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) անվանումը, 2) սյունակ 4՝ վիճակագրական փաստաթղթի տեսակը կամ աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) համար հիմք հանդիսացող այլ նյութերը (աղբյուրները), 3) սյունակ 5՝ վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) ընդգրկվածությունը (ըստ ոլորտի, գործունեության տեսակի, տարածքային բաշխվածության, աշխատողների թվաքանակի և այլն), 4) սյունակ 6՝ վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) հաճախականությունը, 5) սյունակ 7՝ վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) կատարման (մշակման) ավարտը (ամսաթիվը կամ օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո), 6) սյունակ 8՝ Արմստատի պաշտոնական կայքում առկա վիճակագրական հրապարակումներն ըստ ծածկագրերի (տե՛ս ՄԱՍ 3), տվյալների բազաներն ըստ հղումների և այլն, որոնցում առկա է վիճակագրական աշխատանքի արդյունքը (ցուցանիշը):» պարբերությունում սյունակների համարակալումը համապատասխանեցնել ՄԱՍ 1 աղյուսակի սյունակների հետ:	**1. Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

2. Նախագծի 1-ին մասի «1.2.3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ենթաբաժնի աղյուսակի՝ 1) 9-րդ և 11-րդ տողերով նախատեսված աշխատանքները հրապարակել նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բաշխվածությամբ և ըստ ֆինանսավորման աղբյուրների, շենքերի և շինությունների նշանակությունների, շինմոնտաժային աշխատանքների տեսակի, 2) 10-րդ տողով նախատեսված աշխատանքը հրապարակել նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բաշխվածությամբ և ըստ էներգակիրների տեսակների, ծավալների և արժեքների: **3.** Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աղյուսակի «1.3. շինարարության ծավալը» տողից հետո ավելացնել «1.3.1. շինմոնտաժային ծավալը» տողը՝ համապատասխան ցուցանիշներով:	**2. Չի ընդունվել:** **1)** Սույն տեղեկությունները հավաքվում են միայն հանրապետության կտրվածքով, առանց մարզերի բաշխվածության, պայմանավորված այն հանգամանքով, որ ելնելով վիճակագրական հաշվետվության ձևերի կառուցվածքից բոլոր ցուցանիշների հաշվառումն էականորեն կմեծացնի ռեսպոդենտների ծանրաբեռնվածությունը: **2)** Նախագծի 1-ին մասի «1.2.3. Շինարարություն» ենթագլխի 10-րդ տողով հավաքվող տեղեկությունը վերաբերում է միայն շինարարական կազմակերպությունների կողմից օգտագործված առաջնային և երկրորդային էներգակիրների օգտագործմանը և պահուստներին: **3)** Արմստատի կողմից հրապարակվող «ՀՀ սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող **<u>ընթացիկ - օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական</u>** հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» մամուլի հաղորդագրության մեջ նման տարանջատումը նպատակահարմար չէ, քանզի հայցվող տեղեկությունը հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում (տե՛ս վերջին հրապարակումը https://armstat.am/file/article/sv_07_24a_123.pdf հղումը):

46. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	18.07.20204թ. N 01/15806-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
47. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	01.08.2024թ. N 01/29.5/5/4396-2024
1. Նախագծի 6. Շրջակա միջավայր և բնական պաշարներ բաժնի 9-րդ, 10-րդ և 13-րդ կետերի «Վիճակագրական փաստաթղթի տեսակը կամ աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) համար հիմք հանդիսացող այլ նյութերը (աղբյուրները)» սյունակում նշված հաշվետվական ձևերի (Ձև 2-տա (օդ), Ձև 1 թափոն և Ձև 2-տա (ջրտնտ)) ներկայացման պարտականությունները **<u>հանել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից</u>**, քանի որ հաշվետվությունների ընդունման և ներկայացման գործառույթ չենք իրականացնում և այն **<u>վերապահել Շրջակա միջավայրի նախարարությանը</u>**: Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ մեր N01/005/4/3240-2022 և N01/005/3306-2022 գրություններով նախկինում էլ առաջարկել էինք, որ անհրաժեշտ է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում ներդնել տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների միասնական հավաքագրման էլեկտրոնային համակարգ, որտեղ տեղեկատվությունը կմուտքագրվի անմիջապես տնտեսավարող սուբյեկտների կողմից և համապատասխան ձևաչափերով հասանելի կլինի թե՛ Տեսչական մարմնին՝ վերահսկողություն իրականացնելու համար, թե՛ Վիճակագրական կոմիտեին՝ վիճակագրությունը իրականացնելու համար:	**1. Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ինչ վերաբերում է Նախագծի 6-րդ բաժնի 14-րդ կետի Զև 1-բնապահպանություն ձևաչափի սահմանված ժամկետում ներկայացմանը, հայտնում եմ, որ առաջարկություններ և դիտողություններ չունենք:	
48. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմին	23.07.2024թ. N 01/02.1/706-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
49. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմին	20.06.2024թ. N 01//1171-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
50. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	31.07.2024թ. N /06.1/4/10012-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
51. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	10.07.2024թ. N ՔՏՄ/06.1.04/18916-24
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
52. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան	
Չի ներկայացվել	

53. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ	
Չի ներկայացվել	
54. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան	01.08.2024թ. N Ա/Հ
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
55. Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ	30.07.2024թ. N ԴԴ/3036-24
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
56. Հայաստանի Հանրապետության դատախազություն	26.07.2024թ. N 02/20.4/13706-2024
ՀՀ դատախազության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին» Ձև 1Մ հաշվետվությունը, որի լրացման և ներկայացման կարգը սահմանվում է «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշմամբ: Միաժամանակ, հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող հանցագործությունների մասին դիմումների և	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

հաղորդումների քննարկման վերաբերյալ» Ձև 2Մ հաշվետվությունը չի ներկայացվում ՀՀ վիճակագրական կոմիտե, քանի որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համատեքստում նման առանձին հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտությունը վերացել է: Այս կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշումը մինչ օրս չի համապատասխանեցվել 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի կարգավորումներին:	
57. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե	25.06.2024թ. N 18-6564-24
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
58. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե	01.07.2024թ. N 12/12/200246-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
59. Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդ	
Չի ներկայացվել	
60. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ	
Չի ներկայացվել	

61. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	
62. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	22.07.2024թ. N ԳԲ/34.3-Մ2-3/3358-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
63. Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողով	30.07.2024թ. N ԳԳ/867-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
64. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	01.08.2024թ. N 01/2366-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
65. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	31.07.2024թ. N 01/13.3/3436-2024
1. Նախագիծը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ենթարկվել է ուսումնասիրության՝ մարդու իրավունքների պաշտպանության առանձին ոլորտներում վիճակագրական տվյալների հավաքագրման անհրաժեշտության տեսանկյունից, որոնց մի մասին անդրադարձ է կատարվել Պաշտպանի տարեկան հաղորդումներում: Վիճակագրական կոմիտեի լիազորությունների հաշվառմամբ՝ սույն կարծիքով անհրաժեշտ է արձանագրել Պաշտպանի	**1. Ընդունվել է ի գիտություն:**

գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բարձրացված այն խնդիրները, որոնց վերաբերյալ վիճակագրական տվյալների առկայությունը կարևորվել է այդ հաղորդումներով: Այսպիսով, վերահաստատելով նախկինում վիճակագրական ծրագրի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները՝ առաջարկում ենք վարել նաև՝ 1) նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ վիճակագրություն՝ հիմնված տարբեր վերաբերելի չափանիշների վրա,	**1) Ընդունվել է ի գիտություն:** Արմստատը ԿԳՄՍՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից ամփոփ տեղեկություն ստանում է միայն հանրակրթության ոլորտի վերաբերյալ: Հանրակրթական դպրոցների 2023/2024 ուսումնական տարվա շենքային պայմանների վերաբերյալ տեղեկությունը հրապարակված է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-մարտին» տեղեկատվական ամսական զեկույցում, հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_03_24a_5130.pdf : Հարկ է նշել, որ հայցվող լրացուցիչ տեղեկություններն իրենց բովանդակությամբ վերաբերում են նշվածին առնչվող վարչական բնույթի հաշվառումներին, որոնք գտնվում են համապատասխան ոլորտում քաղաքականություններ մշակող և իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տիրույթում: Ըստ այդմ, վերջիններիս կողմից խնդրո առարկայի վերաբերյալ համապատասխան վարչական հաշվառումներ իրականացնելու և դրանց արդյունքում

	համապատասխան վարչական ռեգիստրներ ձևավորելու/ ընդլայնելու և դրանց ամփոփ արդյունքները Արմստատին հասանելի դարձնելու պարագայում Արմստատը պատրաստակամ է դրանք ներառել վիճակագրական ծրագրերում և հրապարակել պաշտոնական վիճակագրության շրջանակներում:
2) ընտանիքում բռնության դեպքերի միասնական, կենտրոնացված ու համակարգված վիճակագրություն՝ ապահովելով ընտանիքում բռնության դեպքերին առնչվող տվյալների ճշգրիտ ու ամբողջական հաշվառումը,	**2) Ընդունվել է ի գիտություն:** Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը ՀՀ ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ներքո վարվող վարչական ռեգիստրն է: Նշված աղբյուրից ստացվող տեղեկությունների հենքով Արմստատի կողմից հրապարակվող խնդրո առարկա ընտանեկան բռնության վերաբերյալ ցուցանիշները հասանելի են հետևյալ հղումներով. https://armstat.am/file/article/sv_01_24a_560.pdf sv_06_24a_580 (armstat.am) Նշվածով պայմանավորված, խնդրո առարկա ցուցանիշների ամբողջականության և որակին առնչվող հարցադրումների վերաբերյալ հնարավոր լուծումները գտնվում են ՆԳՆ կողմից վարվող համապատասխան վարչական ռեգիստրի տիրույթում:
3) երեխայի նկատմամբ բռնության առանձին վիճակագրություն՝ հավաքագրելով բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների սեռի, տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի	**3) Չի ընդունվել:** Ընդհանրապես բռնության (այդ թվում՝ երեխաների նկատմամբ) տեղեկություններ կարող են հավաքվել առանձին նպատակային հետազոտությունների միջոցով, որոնց համար

և այլ կարևոր տվյալների վերաբերյալ առանձնացված տեղեկատվություն,	կիրառվում են միջազգայնորեն ընդունված մեթոդաբանություն և գործիքակազմ: Նմանատիպ հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ռեսուրսներ, որոնց, ցավոք Արմստատը ներկայում չի տիրապետում՝ պայմանավորված Արմստատին հատկացվող ռեսուրսների սահմանափակմամբ: Նշվածով պայամանավորված բռնության վերաբերյալ առաջարկվող նոր տվյալների հավաքումը, մշակումն Արմստատի կողմից ցավոք ներկայում իրագործելի չէ: Բացի այդ, հարկ է նկատի ունենալ նաև, որ հանցագործության տարրեր պարունակող երևույթների վերաբերյալ վիճակագրական գործիքակազմերով տեղեկությունների հավաքումը կարող է պարունակել տվյալների ամբողջականության և որակին առնչվող ռիսկեր՝ պայմանավորված հարցվողների կողմից այդպիսի օրենքով արգելված և պատժելի երևույթների չբացահայտման և անձնական տվյալների գաղտնիության պահպանման հանգամանքներով՝ ի տարբերություն խնդրո առարկային վերաբերող վարչական աղբյուրից ստացվող տվյալների: Ընդ որում, ՆԳՆ համապատասխան վարչական ռեգիստրում առկա են որոշակի տվյալներ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի արձանագրման վերաբերյալ (տե՛ս վերը հիշատակված հղումները): Նշվածում առկա տեղեկությունների կազմի ու կառուցվածքի ընդլայնման և Արմստատին դրանց հասանելի դարձնելու պարագայում Արմստատը պատրաստակամ է դրանք ևս ներառել վիճակագրական

	ծրագրերում և հրապարակել պաշտոնական վիճակագրության շրջանակներում:
4) Հանրային Հեռուստատեսության և Հայաստանի Հանրապետությունում գործող և մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակվող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հաղորդումների՝ քանակական և որակական վիճակագրական տվյալների վարումը: Ներկայացվածից բացի հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում մարդու իրավունքների պաշտպանության առանձին ոլորտներում վիճակագրական տվյալների հավաքագրման անհրաժեշտության տեսանկյունից ընդգծվել են մի շարք կոնկրետ հարցեր, որոնք կարող են ուղենիշային լինել հետագայում վիճակագրական աշխատանքի համապատասխան ցուցանիշի շրջանակներում: Այսպես, կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման շրջանակներում տարեկան հաղորդման մեջ նշվում է որոշակի փաստերի վերաբերյալ վիճակագրություն վարելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա ի սկզբանե մարման ենթակա գումարի չափից ավել արգելանք դրված լինելու մասին բողոքների վերաբերյալ առանձին վիճակագրություն վարելու, կատարողական վարույթի կողմերին ծանուցելու վերաբերյալ առանձին վիճակագրություն վարելու, ՀՀ պաշտպանության նախարարությունից փոխանցվող բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա արգելանք կիրառված լինելու մասին դիմումների վերաբերյալ վիճակագրություն վարելու, երեխաների	**4) Ընդունվել է ի գիտություն:** Հարկ է նշել, որ հայցվող տեղեկությունները իրենց բնույթով և բովանդակությամբ վերաբերում են նշվածին առնչվող վարչական հաշվառումներին, որոնք գտնվում են համապատասխան ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տիրույթում: Ըստ այդմ, նմանատիպ վարչական հաշվառումներ իրականացնելու և համապատասխան վարչական ռեգիստրներ ձևավորելու/ընդլայնելու, ինչպես նաև դրանց արդյունքները Արմստատին հասանելի դարձնելու պարագայում, Արմստատը պատրաստակամ է դրանց ամփոփ արդյունքների վերաբերյալ միջոցառումները ներառել վիճակագրական ծրագրերում՝ պաշտոնական վիճակագրության շրջանակներում հրապարակելու նպատակով: Ուստի առաջարկվում է, խնդրո առարկա հայցվող տեղեկությունների մասով դիմել ոլորտային քաղաքականություններ մշակող և իրականացնող և ըստ այդմ համապատասխան վարչական ռեգիստրներ վարող նոր ձևավորող կամ ընդլայնող պետական մարմիններին՝ հաշվի առնելով նաև Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանվող վարչական տվյալների առանձնահատկությունները:

տեսակցություններին և խնամքի կազմակերպմանն առնչվող կատարողական վարույթների կասեցման հիմքերի իրավաչափությանը վերաբերող բողոքների վերաբերյալ և այլ վիճակագրություն վարելու անհրաժեշտությունը: Ի թիվս այլնի՝ անհրաժեշտ է վարել նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և առանց օթևան մնացած՝ երեխա ունեցող ընտանիքների և նրանցից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված ահազանգերի թվի վիճակագրության վարման, քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց վերաբերյալ համապարփակ վիճակագրական տվյալների առկայության, Արցախից տեղահանված և ՀՀ-ում գտնվող անձանց կացարանի ապահովման վերաբերյալ ամբողջական ու պատշաճ վիճակագրության վարման անհրաժեշտությունը:	
2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության շրջանակներում իրականացված մշտադիտարկման, Պաշտպանին հասցեագրված անհատական դիմում-բողոքների, ինչպես նաև միջազգային չափանիշների ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վարելու վիճակագրություն. 1) հանրային տրանսպորտի՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված լինելու վերաբերյալ, 2) անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի վերաբերյալ	**2. Ընդունվել է ի գիտություն:** **1-4-րդ ենթակետերն ընդունվել են ի գիտություն:** Ընդհանրապես հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ամփոփ տեղեկությունների աղբյուրը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան վարչական ռեգիստրն է: Նշվածը,

3) հաշմանդամության համար հիմք հանդիսացող խնդիրների տեսակների (ֆիզիկական, հոգեկան և այլ) վերաբերյալ, 4) ֆիզիկական հաշմանդամության ենթատեսակների (տեսողության խնդիրներ, լսողության խնդիրներ, տեղաշարժման խնդիրներ՝ ըստ աջակցող միջոցների տեսակների և այլն) վերաբերյալ,	համաձայն վիճակագրական ծրագրերի պարբերաբար հրապարակվում է Արմստատի պաշտոնական հրապարակումներում (տե՛ս օրինակ https://armstat.am/file/article/sv_03_24a_560.pdf հղման ներքո): Ինչ վերաբերում է հանրային տրանսպորտի՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված լինելու վերաբերյալ տեղեկություններին, ապա դրանք ևս իրենց բովանդակությամբ վարչական բնույթի են, կարող են հաշվառվել տրանսպորտի ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող համապատասխան պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ խնդրո առարկային առնչվող ծրագրեր իրականացնելիս, որոնց արդյունքում կձևավորեն համապատասխան վարչական ռեգիստրներ, ինչն էլ կարող է հիմք հանդիսանալ հայցվող տեղեկությունների ստացման համար:
5) հաշմանդամություն ունեցող աշխատողների և տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց վերաբերյալ:	**5) Չի ընդունվել:** Նախագծով նախատեսված **տնային տնտեսություններում իրականացվող** Աշխատուժի **ընտրանքային** հետազոտության **(ԱՀ)** շրջանակում (ծածկագրեր 141015-141016) իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի շուկայում մասնակցության վերաբերյալ տվյալների մշակում, արտադրում և տարածում՝ տարեկան հաճախականությամբ հրապարակվող «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուի «10.Հաշմանդամություն ունեցող բնակչություն» հատվածում:

	ԱՀ-ն, որպես ստանդարտացված մեթոդաբանությամբ և ընթացակարգով հավաքվող աշխատանքի շուկային վերաբերող տվյալների բացառիկ աղբյուր, ապահովում է ժողովրդագրական խմբերի լայն ընդգրկում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, որոնց զբաղվածության, գործազրկության, աշխատուժի մասնակցության և աշխատանքային պայմանների վերաբերյալ տվյալներն էական նշանակություն ունեն հասկանալու և մշտադիտարկելու վերջիններիս աշխատաշուկայում ներգրավվածության ընթացիկ իրավիճակը և փոփոխությունների միտումները: Հետազոտությունը թույլ է տալիս վերլուծել նաև հաշմանդամության կարգավիճակի և ժողովրդագրական այլ բնութագրերի միջև հատումները՝ տարիք, սեռ, կրթական մակարդակ, բնակության վայր (քաղաքային, գյուղական), հաշվարկել ցուցանիշներ, **որոնք գոյություն ունեցող տեղեկատվական այլ աղբյուրներում առկա չեն,** ինչպես նաև համեմատել հաշմանդամություն չունեցողների նույնանուն ցուցանիշների հետ՝ ավելի խորը պատկերացումներ կազմելու հաշմանդամություն ունեցողների աշխատաշուկայի փորձառությունների վերաբերյալ: Այնուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ԱՀ-ն, լինելով ո՛չ թե վարչական տեղեկատվական աղբյուր, այլ ընտրանքային հետազոտություն՝ տնային տնտեսությունների ընտրանքի սահմանափակ չափով և որոշ երևույթների (այդ թվում՝ հաշմանդամության) համեմատաբար քիչ տարածվածությամբ պայմանավորված, թույլ է տալիս գնահատել միայն խնդրո

	առարկային վերաբերող առանցքային որոշ ցուցանիշներ, այն էլ՝ խմբավորման (ագրեգացիայի) բարձր մակարդակում: Միաժամանակ տեղեկացվում է նաև, որ 2014թ. ի վեր ԱՀ միկրոտվյալների բազաները հանրայնորեն հասանելի են, ինչը հետազոտող հանրությանը լայն հնարավորություններ է ընձեռում ինքնուրույնաբար հաշվարկել ցուցանիշներ՝ ԱՀ հարցաթերթով հավաքված տեղեկությունների հիման վրա՝ գնահատելով դրանց արժանահավատությունն ըստ ներկայացուցչականության և հաշվի առնելով հնարավոր ռիսկերը՝ կատարել անհրաժեշտ վերլուծություններ:
3. Երեխաների իրավունքների պաշտպանության հարցում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության շրջանակներում իրականացված մշտադիտարկման, Պաշտպանին հասցեագրված անհատական դիմում-բողոքների, ինչպես նաև միջազգային չափանիշների ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վարելու վիճակագրություն. 1) մինչև 18 տարեկան հղիների, ծննդաբերների և ծննդկանների թվի վերաբերյալ՝ ընդգրկելով հետևյալ տարիքային խմբերը՝ մինչև 14, 14-16, 16-18 տարեկան, ինչպես նաև տրամադրված ծառայությունները, 2) հոգեկան և վարքի խանգարում ունեցող անձանց շրջանակներում մինչև 18 տարեկան անձանց թվի վերաբերյալ՝ ըստ տարիքային խմբերի (մինչև 14, 14-16, 16-18 տարեկան), հիվանդությունների, տրամադրված ծառայությունների՝ հետևյալ ձևաչափով.	**3. Ընդունվել է ի գիտություն:** 3-րդ կետում և դրանից հետո նշված բոլոր ենթակետերով հայցվող բոլոր տեղեկությունները ևս իրենց բովանդակությամբ վարչական բնույթի են, ենթակա են գրանցման, հաշվառման առողջապահության ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող մարմինների կողմից: Նմանատիպ վարչական ռեգիստրների ձևավորման պարագայում և Արմստատին դրանց ամփոփ արդյունքերին հասանելիություն ապահովելու պարագայում, Արմստատը պատրաստակամ է հրապարակելու նաև հայցվող տեղեկությունները: Ինչ վերաբերում է մինչև 18 տարեկան ծննդաբերածների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներին, ապա դրանց ժամանակագրական շարքը ներկայացված է Հայաստանի տվյալները Կայուն Զարգացման Նպատակների (ԿԶՆ) համար

Հոգեբուժական օգնություն, սպասարկում, խնամք և այլ ձևով (այդ թվում՝ հոգեբանական) օգնություն ստացած երեխաների ընդհանուր թիվը
Հիվանդանոցային և արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացած երեխաների ընդհանուր թիվը
Կանխարգելիչ խնամք ստացած երեխաների թիվը
Բացի հիվանդանոցային և արտահիվանդանոցային օգնությունից և սպասարկումից այլ ձևով օգնություն ստացած երեխաների թիվը

3) հոգեկան առողջության խնդիրների ունեցող երեխաների համար նախատեսված անձնակազմի քանակի վերաբերյալ՝ ըստ ձևաչափի.

Մասնագետներ	**Թիվը (1000 երեխայի հաշվով)**
Բժիշկներ	
Մանկաբույժներ	
Հոգեբույժներ	
Մանկական հոգեբույժներ	
Բուժքույրեր	
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում մասնագիտացված բուժքույրեր	
Հոգեբաններ	

հարթակում 3-րդ նպատակի ցուցանիշի ներքո (տե՛ս՝ http://sdg.armstat.am/am/3-7-2/ և http://sdg.armstat.am/am/3-7-2-a/ հղումները):

Սույն կետում ներկայացվածի առնչությամբ տեղեկացվում է նաև, որ Արմստատը Առողջապահության նախարարությունից տարեկան հաճախականությամբ ստանում է ցուցանիշներ՝ հոգեկան և վարքի խանգարումներով հիվանդության առաջին անգամ հաստատված աշխատորոշման վերաբերյալ՝ ըստ 0-14, 15-17, 16-18 տարիքային խմբերի և ըստ հիվանդությունների տեսակների: Նշվածը հասանելի է Արմստատի պաշտոնական կայքում՝ https://armstat.am/file/article/soc_sit_2022_9.pdf հղման ներքո:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում մասնագիտացված բուժքույրեր		
Սոցիալական աշխատողներ		
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում մասնագիտացված սոցիալական աշխատողներ		
4) առողջության առաջնային պահպանման հաստատությունների սպասարկման տարածքում բնակվող մինչև 18 տարեկան անձանց մոտ գրանցված հիվանդությունների և տրամադրված ծառայությունների վերաբերյալ, 5) առանց ծնողական խնամքի երեխաների թվի վերաբերյալ՝ ըստ շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող, խնամակալության հանձնված և խնամատար ընտանիքում խնամք ստացող երեխաների, 6) առանց ծնողական խնամքի մնացած և մեկ անգամից ավելի տարբեր խնամատար ընտանիքներում խնամք ստացած երեխաների թվի վերաբերյալ,		**3-րդ կետի 5-6-րդ ենթակետերն ընդունվել են ի գիտություն:** Խնդրո առարկա տեղեկությունների մի մասը, համաձայն մանկատների կողմից ներկայացված տվյալների, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ամփոփված տեղեկությունների, Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակվում են Արմստատի պաշտոնական կայքում (տե՛ս https://armstat.am/file/article/sv_03_24a_530.pdf, https://armstat.am/file/article/sv_06_24a_570.pdf հղումները): Ինչ վերաբերվում է խնամակալության հանձնված և խնամատար ընտանիքներում խնամք ստացող երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած և մեկ անգամից ավել տարբեր խնամատար ընտանիքներում խնամք ստացած երեխաների թվի վերաբերյալ տեղեկություններին, ապա նշվածի հետ կապված հարաբերությունները կարգավորվում

	են ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 751-Ն որոշմամբ, որով նախատեսված է նման կարգավիճակ ունեցող ընտանիքների փոխատուցումը: Հետևաբար նման վարչական վիճակագրություն հնարավոր է ստանալ նշված փոխհատուցումը տրամադրող մարմնից, որը նշված ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով պետք է վարի խնդրո առարկային առնչվող համապատասխան վարչական ռեգիստր:
7) թրաֆիքինգի զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի շրջանակներում երեխաներ թվի վերաբերյալ՝ ըստ տրամադրված ծառայությունների,	**7) Ընդունվել է ի գիտություն:** Թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկությունները Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տարեկան հաճախականությամբ արդեն իսկ տրամադրվում են Արմստատին, որոնք հրապարակվում են Արմստատի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղման ներքո https://armstat.am/file/article/sv_12_23a_530.pdf :

8) հանցագործությունից տուժած, ինչպես նաև վկա երեխաների թվի վերաբերյալ՝ ըստ հանցագործության տեսակների և վերջիններիս տրամադրված ծառայությունների, 9) նախադպրոցական կրթության համար տարիքային խմբերին համապատասխանող հերթագրված և նախադպրոցական ուսումնական հաստատություն չհաճախող երեխաների թվի վերաբերյալ, 10) պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թվի վերաբերյալ:	**3-րդ կետի 8-10-րդ ենթակետերն ընդունվել են ի գիտություն:** Հայցվող տեղեկություններն իրենց բովանդակությամբ ևս վարչական բնույթի են և դրանց հրապարակումը հնարավոր է միայն համապատասխան լիազոր մարմինների (օրինակ՝ Ներքին գործերի նախարարության՝ հանցագործությունների մասով, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ կրթության մասով և այլն) կողմից համապատասխան վարչական ռեգիստրներ ձևավորելու, վարելու, ընդլայնելու և Արմստատին խնդրո առարկայի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների տրամադրման պարագայում:
66. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության	
Չի ներկայացվել	
67. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա	16.07.2024թ. N 05-01/30
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
68. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ	
Չի ներկայացվել	

69. Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ	
Չի ներկայացվել	
70. «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպություն	
Չի ներկայացվել	
71. Մարդկային զարգացման միջազգային կենտրոն	
Չի ներկայացվել	
72. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն	
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
73. «Հայաստան» համահայկական հիմնադրամ	
Չի ներկայացվել	
74. Հայաստանի Հանրապետությանում արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
75. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամ	
Չի ներկայացվել	

76. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
77. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպության ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
78. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գրասենյակի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
79. Հայաստանի Հանրապետությանում միգրացիայի միջազգային կազմակերպության ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
80. Հայաստանի Հանրապետությանում աշխատանքի միջազգային կազմակերպություն	
Չի ներկայացվել	
81. Հայաստանի Հանրապետությանում վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	

82. Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ	
Չի ներկայացվել	
83. Հայաստանում եվրոպական միության պատվիրակություն	
Չի ներկայացվել	
84. Ասիական զարգացման բանկի հայաստանյան մշտական առաքելություն	
Չի ներկայացվել	
85. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ	
Չի ներկայացվել	
86. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	05.08.2024թ. N 08.2-07/483-24
1) 420008 աշխատանքի չորրորդ եռամսյակային ժամկետը փոխել մարտի 15: 2) 420011 իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները (ԿԲ լրահաշվարկներով) և վճարային հաշվեկշիռ արտաքին առևտուր աշխատանքի (Իրական հատվածում	**1) Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: **2) Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

կատարված օտարերկրյա ներդրումները, ԿԲ լրահաշվարկներով) ժամկետը փոխել հունիսի 25 և դեկտեմբերի 26: 3) Վճարային հաշվեկշիռ արտաքին առևտուր (նախնական) աշխատանքի եռամսյակային ժամկետը փոխել 43/45: 4) Տնային տնտեսությունների վերջնական դրամական ծախսերը գնահատելու նպատակով բնեղեն եղանակով ապրանքափոխանակության արժեքի վերաբերյալ հարցի ավելացում հարցաշարում:	**3) Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: **4) Չի ընդունվել:** Խնդրո առարկա նպատակին համարժեք ցուցանիշը Արմստատը վիճակագրական ծրագրերին համապատասխան հաշվարկում է տարեկան հաճախականությամբ, ինչն արտացոլվում է ՀՀ ազգային հաշիվների համակարգի շրջանակում գնահատվող Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի ցուցանիշում (տե՛ս https://armstat.am/file/article/hah_23_6.pdf հղման 46-րդ էջը): Ընդ որում, համաձայն կիրառվող մեթոդաբանության՝ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրի կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և ոչ կազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության հիմնարկների՝ սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն

	ստացած ապրանքների և ծառայությունների բնեղեն տեսքով սպառմանը (անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները): Իսկ բնեղեն եղանակով ապրանքափոխանակության արժեքի վերաբերյալ հարցը, որպես տնային տնտեսության կողմից մթերքի իրացման տարբերակ, արդեն իսկ ներառված է ՏՏԿԱՀ հարցաշարի 21.13 և 24.09 հարցադրումների ներքո:
5) ՍԳԻ մամուլի հաղորդագրության մեջ նաև հրապարակել մեկնաբանություն «բնակարանային ծառայություններ» ապրանքախմբում ներառված կոմունալի և բնակարանների վարձավճարների փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն:	**5) Չի ընդունվել:** ՀՀ ՍԳԻ-ի մամուլի ամսական հաղորդագրության մեջ ներկայացվում է տեղեկություն ապրանքների և ծառայությունների այն խմբերի գների փոփոխությունների մասին, որոնք հաշվետու ամսում արձանագրել են համեմատաբար մեծ գնաճային միտումներ: Վերը նշված խմբավորումների գների փոփոխությունների մասին տեղեկությունները կընդգրկվեն մամուլի հաղորդագրության մեջ ՍԳԻ-ի ցուցանիշի վրա հաշվետու ժամանակաշրջանում համեմատաբար մեծ տոկոսային կետով ազդեցություն արձանագրելու ամսում:
6) Հաշվարկել և հրապարակել ՍԳԻ, ճյուղային և աշխատանքի վիճակագրության սեզոնային հարթեցված ցուցանիշները:	**6) Ընդունվել է ի գիտություն:** ՍԳԻ-ի սեզոնային հարթեցված ցուցանիշների հաշվարկմանն ու դրանց ներդրմանն ուղված գործընթացները ՀՀ վիճակագրական համակարգում ներկայումս իրականացվում են Ասիական զարգացման բանկի Ասիայի և

	խաղաղօվկիանոսյան երկրների բարեկեցության և կայունության Ճապոնիայի ֆոնդի տեխնիկական աջակցության «Տվյալների նոր աղբյուրներում և տեխնոլոգիաներում նոր վիճակագրական աղբյուրների ձևավորում և կարողությունների զարգացում» 6856 ծրագրի շրջանակում: Ծրագրի ավարտը նախատեսված է 2024 թվականի դեկտեմբերին: Աշխատանքի վիճակագրության շրջանակում 2018թ. ի վեր իրականացվում է աշխատանքի միջին ժամային գնի և միջին ժամային աշխատավարձի եռամսյակային ինդեքսների սեզոնային համահարթեցում (2013Q1 = 100, Qt/Q $_{t-1}$, %)՝ JDemetra+ էկոնոմետրիկ ծրագրային փաթեթի կիրառմամբ: Ինչ վերաբերում է աշխատանքի շուկայի առանցքային եռամսյակային ցուցանիշների սեզոնային համահարթեցմանը (զբաղվածություն և գործազրկություն), ապա առաջարկությունն ընդունելի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսած 2018թ. առկա են վերոնշյալ ցուցանիշների համեմատաբար համադրելի ժամանակային շարքեր, որոնց կիրառմամբ հնարավոր է ապահովել տվյալների սեզոնային համահարթեցման բավարար որակ: Միջին ամսական անվանական աշխատավարձի և պաշտոնապես գրանցված աշխատողների թվաքանակի **ամսական ցուցանիշների** սեզոնային համահարթեցված ցուցանիշների հրապարակում կիրականացվի ավելի ուշ՝ պայմանավորված դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով:

7) Ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ բաժնի «Գնված ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ» աղյուսակում ավելացնել տարբերակ, ըստ որի գնումը կատարվել է օնլայն խանութներից:	**7) Չի ընդունվել:** ՏՏԿԱՀ-ի շրջանակում հետաքրքրություն է ներկայացնում գնված ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեքը, այլ ոչ թե դրանց գնման եղանակը: Ընդ որում, տնային տնտեսությունների կողմից իրականացվող առցանց գնումների ողջ ծավալը նպատակահարմար չէ բացահայտել ՏՏԿԱՀ-ի շրջանակում՝ դրա ամբողջականության ապահովման տեսանկյունից, քանզի առցանց առևտուրն ընդհանրապես (այդ թվում՝ ոչ պարենային ապրանքների մասով) իրականացվում է անկանխիկ եղանակով, ինչն արտացոլվում է այդ նպատակներով գնորդի ու վաճառողի բանկային հաշիվների և/կամ վճարային քարտային հաշիվների միջև իրականացված փոխանցումներով, որոնք էլ կարծում ենք հնարավոր է բացահայտել խնդրո առարկա նպատակով իրականացվող փոխանցումների ժամանակ սպառողի կողմից գրառվող և/կամ ինքնաշխատ եղանակով գեներացվող փոխանցման նպատակի վերաբերյալ տեղեկություններով՝ այդ հաշիվների միջև դրամական շարժը վերահսկող և ըստ այդմ համապատասխան ռեգիստրներ վարող մարմինների կողմից:
8) Հաշվի առնելով մակրոտնտեսական վիճակագրությունում սպասվելիք վերջին փոփոխությունները, քաղաքականություն մշակողների կողմից միկրո տվյալների հանդեպ հետաքրքրությունը, ինչպես նաև տնտեսական քաղաքականության ներառականության գնահատման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Տնային	**8) Չի ընդունվել:** Խնդրո առարկա ապահովագրական վճարների և ստացված փոխհատուցումների գումարների և քանակների վերաբերյալ տվյալների աղբյուր հանդիսանում են համապատասխան ռեգիստրներ վարող ապահովագրական ընկերությունները,

տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաշարում ավելացնել հետևյալ հարցերը. ա.Վերջին 12 ամիսների ընթացքում որքան գումար է ներդրվել ձեր սոցիալական ապահովագրության հաշվին, -Ձեր գործատուի կողմից, -Ձեր կողմից: բ. Դուք, կամ ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը, ստացե՞լ է որևէ փոխհատուցում ապահովագրությունից (նշել փոխհատուցման [սկզբի ամսաթիվից] մինչև [վերջի ամսաթիվ] ժամանակահատվածը): Եթե այո, որքա՞ն է ապահովագրությունից ընդհանուր փոխհատուցումը: Խնդրում ենք նշել բոլոր տեսակի ապահովագրությունների և բոլոր անդամների ընդհանուր գումարը: գ. Արդյո՞ք կատարել եք ծախսեր ինստիտուցիոնալ տնային տնտեսությունում գտնվող անցանց համար: Եթե այո, ապա նշել գումարի չափը:	որոնց գործառույթներից են խնդրո առարկա ցուցանիշների հաշվառումներն ու գրանցումները: Ընդ որում, ապահովագրավճարների և ապահովագրական հատուցումների գումարների վերաբերյալ այդ ընկերություններից ստացված տվյալները Կենտրոնական բանկն (ԿԲ) ամփոփում և տրամադրում է Արմստատին, ինչն էլ հրապարակվում է (տե՛ս օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-հուլիսին» տեղեկատվական ամսական զեկույցը՝ https://armstat.am/file/article/sv_07_24a_320.pdf հղմամբ, էջ 114 և «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2023» վիճակագրական ժողովածուն՝ https://armstat.am/am/?nid=82&id=2602 հղմամբ, էջ 61): առանձին նպատակային հետազոտությունները:
87. Հայաստանի բանկերի միություն	
Չի ներկայացվել	
88. Հայաստանի ֆոնդային բորսա	
Չի ներկայացվել	

89. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	
Չի ներկայացվել	
90. «Վիվա Արմենիա» ՓԲԸ (Վիվա-ՄՏՍ)	25.06.2024թ. N MH/L240529/1.0/AA
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
91. «Յուքոմ» ՓԲԸ	10.07.2024թ. N 1445
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
92. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայփոստ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
93. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
94. «Արմենիա Մարրիոթ» հյուրանոցային համալիր	
Չի ներկայացվել	
95. «Աշտարակ-Կաթ» արտադրական ձեռնարկություն («Պարգև» ՍՊԸ)	

Չի ներկայացվել	
96. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	25.07.2024թ. N 01/14.5/3150-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
97. «Եվրոստան-Ույուտ» ՍՊԸ	
Չի ներկայացվել	
98. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա	27.06.2024թ. N 24-01/324
1. ԵԱՏՄ-ի վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2026-2030թթ. ծրագրի հայեցակարգի մշակման գործընթացի մասնակցության նպատակով հստակեցնել անդամ պետությունների հետ հետագա համատեղ գործողությունների գերակայությունները, հատկապես վճարային հաշվեկշռի «հայելային» վիճակագրությունը բարելավելու առաջարկներն ու միջոցառումները: 2.Կանաչ տնտեսության վիճակագրության ձևավորման և տարածման հնարավորությունների քննարկում և կոնկրետ միջոցառումների ձեռնարկում այն ՀՀ-ում միջազգային մեթոդաբանությանը և վարչական հաշվառումներին համապատասխան ներդնելու համար:	**1. Չի ընդունվել:** Հայաստանի Հանրապետությունում վճարային հաշվեկշռի կազմման պատասխանատու լիազոր մարմինը Կենտրոնական բանկն է, որն էլ իրավասու է վարելու ‚հայելային» վիճակագրություն: **2. Ընդունվել է ի գիտություն:** «Կանաչ տնտեսությունը» սահմանվում է որպես տնտեսություն, որտեղ տնտեսական աճը և բնապահպանական պատասխանատվությունը, փոխադարձաբար միմյանց համալրելով նպաստում են սոցիալական զարգացմանը: ՀՀ-ում կանաչ տնտեսություններին անցումը պահանջում է շահագրգիռ կողմերի միջև սերտ համագործակցություն և

	որոշումների կայացման մեխանիզմների համապատասխանեցում բնապահպանական պահանջների հետ: Արմստատը պատրաստակամ է համագործակցել համապատասխան գերատեսչությունների հետ, մասնակցել ՀՀ-ում միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությունների և վիճակագրության ձևավորման ներդրմանն ուղված քննարկումներին:
3.Վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և ներկայացման գործընթացի թվայնացում և նորարական տեխնոլոգիաների կիրառում:	**3. Ընդունվել է ի գիտություն:** Արմստատը 2024թ.-ի փետրվարի 1-ից գործարկել է «ՀՀ Վիճակագրական կոմիտեի հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը» (այսուհետ՝ Հարթակ) և սկզբունքորեն դադարեցրել վիճակագրական հաշվետվությունների՝ նախ էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ 2024թ. հուլիս ամսից՝ թղթային եղանակով հավաքման գործընթացը: Նշվածով պայմանավորված, Արմստատը, 2024թ. փետրվարի 1-ից 2024թ.-ի հաշվետու և 2023թ.-ի տարեկան ժամանակաշրջաններին վերաբերող բոլոր պաշտոնական վիճակագրական հաշվետվությունները հավաքում է Հարթակի միջոցով՝ պահպանելով համապատասխան հաշվետվությունների ներկայացման ժամկետները: Բացի այդ, վիճակագրական տեղեկություն օգտագործողների կարիքների բավարարման և մեծածավալ տեղեկությունն առավել վիզուալիզացված տարբերակով առավել դյուրին և մատչելի նրանց ներկայացնելու նպատակով՝ սկսած 2021թ.-ից

	www.armstat.am պաշտոնական կայքի գլխավոր էջում ստեղծվել է «Ինֆոգրաֆիկա» խորագրով բաժին, որի ներքո ներկայացված վիճակագրական ցուցանիշների ինֆոգրաֆիկ պատկերավորումների կազմն ու բովանդակությունը շարունակաբար արդիականացվում և ընդլայնվում է: Դրանցում ընդգրկված են ՀՀ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի բնութագրերը նկարագրող վիճակագրական ցուցանիշներ մեծամասամբ տարեկան, ինչպես նաև կիսամյակային, եռամսյակային և ամսական հաճախականությամբ:
4. «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հավելված 2-ում՝ «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» բաժնում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն ըստ եռամսյակների միջին ընթացիկ գներով հաշվարկելու դեպքում ներառել նաև տվյալներ մեկ երեխայի հաշվով՝ մանկական աղքատության մակարդակը որոշելու համար (Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ), ինչպես նաև մեկ երեխայի հաշվով օրական սպառման նորմաների վերաբերյալ (ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի):	**4. Չի ընդունվել:** Համաձայն Համաշխարհային բանկի (ՀԲ) սահմանած մեթոդաբանության՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (ՆՍԶԱ) որոշվում է **1 շնչի և 1 մեծահասակի հաշվով** սպառված սննդամթերքի արժեքով՝ հիմք ընդունելով Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) տնային տնտեսությունների (ՏՏ) կողմից ներայացված սպառման վերաբերյալ տեղեկությունները՝ առանց ՏՏ առանձին անդամների սպառման տարանջատման: Միաժամանակ, Առողջապահության նախարարության (ԱՆ) կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի նորմատիվները ևս հաշվարկված են **1 շնչի հաշվով՝ առանց բնակչության՝ ըստ առանձին տարիքային խմբերի (այդ թվում՝ երեխաների) տարանջատման**:

	Հետևաբար հայցվող հաճախականությամբ խնդրո առարկա ցուցանիշների հրապարակումը հնարավոր չէ իրականացնել: Միաժամանակ տեղեկացվում է, որ մանկական աղքատությանը վերաբերող ցուցանիշները Արմստատը ՀԲ մեթոդաբանությամբ ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա մշակում և հրապարակում է տարեկան հաճախականությամբ: Նշվածը հասանելի է Արմստատի պաշտոնական կայքում (տե՛ս՝ օրինակ, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2022» վիճակագրական-վերլուծական զեկույցի «Մանկական աղքատությունը» ենթաբաժնի 68-70 էջերը՝https://www.armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf հղման ներքո, իսկ աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանական պարզաբանումները՝ https://www.armstat.am/file/article/poverty_2023_a_6.pdf հղման 118-162 էջերում):
5.«Ազգային հաշիվներ»-ում ներառել ազգային եկամտի ցուցանիշը:	**5. Չի ընդունվել:** Ազգային հաշիվների ներդրումից ի վեր, Արմստատը հաշվարկում և հրապարակում է «Համախառն ազգային եկամուտ» ցուցանիշը, որը սկզբնական եկամուտների բաշխման հաշվի հաշվեկշռող հոդվածի ցուցանիշն է՝ սկզբնական եկամուտների սալդոն: Այն հրապարակվում է «Հայաստանի ազգային հաշիվները» ժողովածուում՝ https://www.armstat.am/file/article/hah_23_3.pdf հղմամբ, Արմստատի տվյալների բազաներում «Ազգային հաշիվներ»-ի համախմբված հաշիվներում՝ https://armstat.am/am/?nid=202

	հղմամբ, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» վիճակագրական ժողովածուի «Ազգային հաշիվների համակարգ» հատվածում՝ https://armstat.am/file/doc/99541093.pdf հղմամբ:
6. 5.8՝ «Տնային տնտեսությունների հետազոտություններ»-ում, ներառել նաև հանրապետությունում ձևավորված «Նոր աղքատներ» սոցիալական խմբի վերաբերյալ տվյալներ: Քանի որ վերջինս բազմաշերտ հասկացություն է, ուստի նպատակահարմար ենք համարում ներկայացնել տվյալներ Արցախից 2023թ.-ին բռնի տեղահանվածների թվաքանակի, նրանց սեռահասակային կազմի, զբաղվածության և մնացած ցուցանիշների վերաբերյալ տվյալներ:	**6. Չի ընդունվել:** «Նոր աղքատներ» սոցիալ-տնտեսական երևույթի տեսական նկարագրությունը, սահմանումը, բնակչության այդ շերտի դրսևորման առանձնահատկությունները տարբեր երկրներում ընկալվում է տարբեր կերպ: Ընդ որում, «Նոր աղքատներ» բնակչության խմբի ուսումնասիրության համար դեռևս գոյություն չունի ձևավորված ամբողջական մեթոդաբանություն, ինչը հնարավորություն կտար բացահայտել դրանց առանձնահատկությունները ՀՀ-ում: Միաժամանակ, ներկայում կիրառվող գործիքակազմով, այն է՝ տարեկան հաճախականությամբ իրականացվող ՏՏԿԱՀ-ի շրջանակում, հնարավոր չէ գնահատել «նոր աղքատներ» խմբին առնչվող ցուցանիշներ, քանզի հավաքվող տեղեկությունները վերաբերում են բացառապես հաշվետու տարվան՝ աղքատության մակարդակը գնահատելու նպատակով: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ նաև, որ առանձին սոցիալական, ազգային, տեղագրական և այլ պատկանելիության վերաբերյալ տվյալները ներկայացուցչական չեն ՏՏԿԱՀ շրջանակում ստացվող տեղեկությունների համատեքստում, քանզի ՏՏԿԱՀ նպատակն է ընդհանրապես գնահատել աղքատությունը

	ՀՀ-ում (այդ թվում՝ ըստ մարզերի / Երևան քաղաքի): Հետևաբար, հայցվող «Արցախցիներ» խմբի վերաբերյալ ՏՏԿԱՀ շրջանակում տվյալների արտադրումը, մշակումը և տարածումը նպատակահարմար չէ՝ ցուցանիշների ներկայացուցչականության ապահովման տեսանկյունից: Ավելին, տարբեր սոցիալական, ժողովրդագրական, ազգային պատկանելիությամբ խմբերում ներկայացուցչական պատկեր ստանալու համար նպատակահարմար է այդպիսի առանձին խմբերին վերաբերող համակցություններում առանձին նպատակային հետազոտությունների իրականացումը և ըստ այդմ դրանց արդյունքների վերլուծումը:
7.«Ժողովրդագրության» և «Աշխատանքի շուկա» բաժիններում ներառել արցախցիների մասով տվյալներ:	**7. Չի ընդունվել:** Ժողովրդագրությանն առնչվող առանձին ծածկագրով արցախցիների վերաբերյալ ամբողջական վիճակագրություն արտադրելու, մշակելու և տարածելու համար նախևառաջ անհրաժեշտ են համապատասխան տվյալների աղբյուրներ, այն է՝ խնդրո առարկա տեղեկությունների պատշաճ գրանցում համապատասխան վարչական սկզբնաղբյուրներում և Արմստատին դրանց հասանելիության ապահովում, ինչը սակայն ներկայում ցավոք իրականացված չէ: Այնուամենայնիվ, արցախցիների մասով որոշակի ժողովրդագրական ցուցանիշներ առկա են Նախագծի 512001 և 512004 ծածկագրերով նախատեսված՝ Բնակչության պետական ռեգիստրից ստացվող բնակչության տեղաշարժերի՝ ըստ ժամանման վայրի և ՀՀ-ում հաշվառված

	և հաշվառումից հանվածների վերաբերյալ տեղեկությունների շրջանակում: Ինչ վերաբերում է արցախցիների մասով աշխատաշուկայի վիճակագրությանը, ապա հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի շուկայի վիճակագրության տեղեկատվական աղբյուրներից միակը Նախագծով նախատեսված Տնային տնտեսություններում իրականացվող Աշխատուժի **ընտրանքային** հետազոտությունն **(ԱՀ)** է (ծածկագրեր 141001-141016), որի հարցաթերթով նախատեսված հարցերի շրջանակում այդ թվում՝ արցախցիների հետ կապված հավաքվել/ հավաքվում են տվյալներ՝ բացառապես կապված **հարցվողի ծննդավայրի** և հետազոտվող տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից ի վեր ընկած ժամանակահատվածում բնակության վայրի փոփոխության դեպքում՝ **վերջին տեղաշարժի երկրի/մարզի** մասին: Ըստ այդմ, ընտրանքի մեթոդի կիրառմամբ պայմանավորված, ԱՀ արդյունքներով **լավագույն դեպքում**, հնարավոր է գնահատել միայն առանցքային որոշ ցուցանիշներ և այն էլ՝ խմբավորման (ագրեգացիայի) բարձր մակարդակում: Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկվող ցուցանիշները «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուում ներառելը նպատակահարմար չէ: Այնուհանդերձ, տեղեկացվում է նաև, որ 2014թ. ի վեր ԱՀ միկրոտվյալների բազաները հանրայնորեն հասանելի են, ինչը հետազոտող հանրությանը լայն հնարավորություններ է ընձեռում ըստ առանձին նպատակների ինքնուրույնաբար

8.«Հայաստանի կանայք և տղամարդիկ» ամենամյա վիճակագրական ժողովածուի մեջ ներառել գործարարության մեջ կանանց ներգրավվածության վերաբերյալ տվյալներ:	հաշվարկել ցուցանիշներ՝ ԱՀ հարցաթերթով հավաքված տեղեկությունների հիման վրա՝ գնահատելով դրանց արժանահավատությունն ըստ ներկայացուցչականության և հաշվի առնելով հնարավոր ռիսկերը՝ կատարել վերլուծություններ: **8. Չի ընդունվել:** Հայաստանի կանայք և տղամարդիկ վիճակագրական գրքույկի «10. Զբաղվածություն» բաժնում հրապարակվում է խնդրո առարկա ցուցանիշը (վերջին՝ 2023թ. հրապարակման մեջ՝ Աղյուսակ 10.3, էջ 77): Դասակարգման հիմքն Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգչի 1993թ. խմբագրությունն է (ICSE-93), համաձայն որի ձեռներեցության խմբին դասվում են ինքնազբաղվածները և գործատուները:
99. Հայաստանի ազգային գրադարան	01.08.2024թ. N 1/232-24
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
100. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	

101. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
102. Հայաստանի Հանրապետության աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ	17.07.2024թ. N 22716-2024
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
103. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	02.07.2024թ. N 10/416
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
104.Հայաստանի ամերիկյան համալսարան	
Չի ներկայացվել	
105. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	09.07.2024թ. N Ե/467-2024
2025 թ. վիճակագրական ծրագրի նախագծի համաձայն, նշված տարվա ընթացքում ակնկալվում է հրապարակել Հայաստանի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության բավականին լայն շրջանակ: Այնուհանդերձ, մեր մոտեցմամբ, նաև հաշվի առնելով վիճակագրական տեղեկատվության	

ամենատարբեր օգտագործողների հետ քննարկումների արդյունքները, առաջարկում ենք դիտարկել ստորև նշված վիճակագրական տեղեկատվությամբ 2025 թ. վիճակագրական ծրագիրը համալրելու հնարավորությունը: 1. Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների բավականին լայն շրջանակի համար օգտակար և որոշումների կայացման համար կարևոր տեղեկատվության աղբյուր են հանդիսանում սպառողների ու տնտեսվարող սուբյեկտների վստահության, սպասումների կամ առկա իրավիճակի գնահատական հանդիսացող ինդեքսները: Օրինակ՝ ձեռնարկատիրական վստահության ինդեքսը, ըստ տնտեսական գործունեության ոլորտների, կարևոր տեղեկատվություն է պարունակում գործարար միջավայրի զարգացման միտումների ու ձևավորված սպասումների վերաբերյալ: Վերոնշյալ ու նմանատիպ մի շարք ցուցանիշներ և ինդեքսներ առանձին երկրներում հաշվարկվում և հրապարակվում են պաշտոնական վիճակագրության շրջանակներում:	**1. Չի ընդունվել:** Նկատի ունենալով խնդրո առարկա ցուցանիշների բովանդակային առումով վիճակագրական գործառույթների շրջանակից դուրս լինելը, ենթադրվում է, որ այն ավելի համահունչ է այլ կառույցների՝ Կենտրոնական բանկ, շահառու նախարարություններ և/կամ այլ հետազոտական/ակադեմիական հաստատությունների գործունեությանը:
2. Սպառողների բավական լայն շրջանակի համար շատ օգտակար կարող է լինել նաև ստորև նշված վիճակագրական տվյալների և ցուցանիշների հրապարակումը: Մասնավորապես. 1) հիմնական միջոցների օգտագործման աստիճանը՝ ըստ գործունեության տարբեր տեսակների:	**2. Չի ընդունվել:** **1)** Առաջարկվող ցուցանիշի ամբողջականության ապահովման դժվարություններով պայմանավորված (ինչպես տնտեսավարող սուբյեկտների կողմից Արմստատին ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների թերի լրացումներ, վարչական ռեգիստրներից՝ Կենտրոնական բանկ

	և ֆինանսների նախարարություն, համապատասխան ցուցանիշների հաշվառման և ամփոփման հետ կապված պատճառներով), խնդրո առարկա ցուցանիշի հաշվարկման ընթացքում իրականացվում են նաև փորձագիտական գնահատումներ: Դրանով պայմանավորված ամբողջ տնտեսության մակարդակով հիմնական ցուցանիշների մանրամասնեցումների հրապարակում չի նախատեսվում, սակայն Արմստատը պատրաստակամ է դրանք տրամադրելու՝ բացառապես հետազոտական նպատակներով օգտագործելու համար:
2) մանրածախ ու մեծածախ առևտրի շրջանառությունն ըստ ապրանքախմբերի:	**2)** Ըստ ապրանքախմբերի մանրածախ առևտրի շրջանառության վերաբերյալ տեղեկությունը յուրաքանչյուր տարի հրապարակվում է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք»-ի «Առևտուր և այլ ծառայություններ» բաժնում (տե՛ս https://armstat.am/file/doc/99541123.pdf հղման 16.8 աղյուսակը): Ըստ ապրանքախմբերի մեծածախ առևտրի շրջանառության վերաբերյալ տեղեկությունը յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի «Առևտուր և այլ ծառայություններ» բաժնում (տե՛ս վերջին հրապարակումը https://armstat.am/am/?nid=81 հղմամբ): **3)** Ապրանքային պաշարների և դրանց ապահովվածության մասին տեղեկությունը յուրաքանչյուր ամիս հրապարակվում է

3) պաշարները առևտրական կազմակերպություններում, ծածկույթն ըստ օրերի:	«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի «Առևտուր և այլ ծառայություններ» բաժնում (տե՛ս նույն հղումը):
4) օրինախախտումների վիճակագրությունը սպառողական ապրանքների մանրածախ առևտրում. ժամկետանց ապրանքների հայտնաբերում, ոչ պատշաճ մակնշմամբ ապրանքներ, նորմատիվ պահանջներին չհամապատասխանող և այլն:	**4)** Սույն տեղեկություններն իրենց բովանդակությամբ դասվում են վարչական բնույթի տեղեկությունների շարքին և գտնվում են վարչական ներգործության լիազորությունների տիրապետող մարմինների գործառույթների իրավասության ներքո: Վերոգրյալով պայմանավորված, առաջարկում ենք դիմել «Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին»-ին:
5) ներդրումների վիճակագրություն. տնտեսվարող սուբյեկտների ներդրումներն ըստ ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների:	**5)** 2024 թվականից 2023 թվականի արդյունքներով «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» ժողովածուում նախատեսվում է տարվա սկզբի և վերջի դրությամբ ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների, ինչպես նաև պարտավորությունների մնացորդների հրապարակումը:
6) ներդրումները հիմնական միջոցներում ըստ տեսակների՝ • շենքեր և շինություններ, • հողերի բարելավում, • մեքենաներ և սարքավորումներ, • մտավոր սեփականության օբյեկտներ:	**6)** Ըստ տնտեսական գործունեության տեսակների շինարարության գծով ներդրումները հիմնական միջոցներում ըստ տեսակների (շենքեր և շինություններ, մեքենաներ և սարքավորումներ) հավաքվում է ՁԵ 11-ՀՄ վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով, համաձայն «2025թ. տարեկան վիճակագրական ծրագրի» նախագծի (ծածկագիր 123003), որը հրապարակվում է «Հայաստանի վիճակագրական

	տարեգրքում» տե՛ս հղումը՝ https://armstat.am/file/doc/99541113.pdf :
7) հիմնական միջոցներում ներդրումների կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների • սեփական միջոցներ, • ներգրավված միջոցներ՝ բանկային վարկ, բյուջետային միջոցներ, այլ կազմակերպությունների միջոցներ, • արտերկրից ներգրավված միջոցներ	7) Ներդրումները հիմնական միջոցներում ըստ ֆինանսավորման աղբյուրների չի հավաքվում, պայմանավորված այն հանգամանքով, որ ելնելով վիճակագրական հաշվետվության ձևի կառուցվածքից բոլոր ցուցանիշների հաշվառումն էականորեն կմեծացնի ռեսպոդենտների ծանրաբեռնվածությունը:
8) հիմնական միջոցներում ներդրումները ըստ տնտեսական գործունեության տեսակների:	**8) Տե՛ս 7-րդ ենթակետի պարզաբանումը:**
9) ներդրումային նշանակության ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները:	**9)** Շինարարության ոլորտում կապիտալ ներդումների արժեքների ինդեքսների հաշվարկը, հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 472-Ն պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին» որոշմամբ, ամսական հաճախականությամբ իրականացվում է Ֆինանսների նախարարության կողմից և հրապարակվում է նախարարության պաշտոնական կայքում (տե՛ս https://minfin.am/hy/page/shinararutyan_olorti_indeqsner

	հղումը):
3. Կազմակերպությունների գործունեության արդյունքների, ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ վիճակագրության մասով.	**3. Չի ընդունվել:**
1) շրջանառության, հասույթի վերաբերյալ տվյալներ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների,	**1)** ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը (շրջանառությունը) ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2) բաժինների ու տնտեսավարողների չափերի յուրաքանչյուր տարի հրապարակվում է «Փոքր ու միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագրում (տե՛ս հղման էջ 9), որում ներառված են «Տնտեսության ոչ ֆինանսական բիզնես հատվածի» բոլոր տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալները:
2) ներկայում հրապարակվում է միայն պարտավորությունների վերաբերյալ վիճակագրություն: Ի հավելումն դրա՝ կարող է հետաքրքրական ու պահանջված լինել նաև ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը,	**2)** Ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է Արմստատի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի (հայերեն և ռուսերեն) եռամսյակային, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն), «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» (հայերեն և անգլերեն), «Հայաստանը թվերով» (հայերեն և անգլերեն) և «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական

	ժողովածուների (հայերեն, անգլերեն) տարեկան հրապարակումներում:
3) շահութաբերությունն ըստ ակտիվների ներկայում նույնպես հրապարակվում է, բայց օրինակ ակտիվների ու շահույթի մեծության վերաբերյալ առանձին տեղեկատվություն չի ներկայացվում:	**3)** Ներկայում Արմստատի կողմից հրապարակվում է շահութաբերության ցուցանիշն ըստ գործունեության տեսակների, որի հաշվարկն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված կազմակերպություններից հավաքված տեղեկատվության հիման վրա: Ինչ վերաբերում է շահույթի և ակտիվների մեծության վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը, ապա Արմստատը, ներկայում չի տիրապետում դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատությունների, քանզի դրանք գտնվում են վարչական մարմինների իրավասությունների տիրույթում, որոնց Արմստատը, ցավոք, դեռևս չունի ամբողջական հասանելիություն:
4. Կազմակերպությունների ինովացիոն ակտիվության վերաբերյալ վիճակագրություն, ներառյալ՝ • կազմակերպությունների ինովացիոն ակտիվությունն ըստ գործունեության տեսակների, • տեխնոլոգիական ինովացիաներ իրականացրած կազմակերպությունների տեսակարար կշիռը, • ինովացիոն ապրանքների և ծառայությունների ծավալը, ըստ գործունեության տեսակների,	**4.** 2016թ. ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում Արմստատի կողմից իրականացվել է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նորարարական գործունեության վերաբերյալ փորձնական հետազոտություն (ՓՀ): 2017թ. նոյեմբերին հրապարակվել է նորարարության վիճակագրության ուղեցույցը (տե՛ս https://armstat.am/am/?nid=82&id=1979 հղումը), իսկ դեկտեմբերին՝ ՓՀ արդյունքներով վիճակագրական ժողովածուն (տե՛ս https://armstat.am/am/?nid=82&id=1990 հղումը):

• տեխնոլոգիական ինովացիաների վրա կազմակերպությունների ծախսերը, ըստ գործունեության տեսակների, • կազմակերպությունների ինովացիոն ներուժը՝ ըստ գործունեության տեսակների, նաև՝ տարածքային կտրվածքով:	Նշված հետազոտության բուն գործընթացի իրականացումը, ինչպես ցույց տվեց ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում համապատասխան փորձագետների հետ համագործակցությունը, պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ՝ այդ թվում մարդկային, ֆինանսական և տեխնիկական (ներառյալ ծրագրային ապահովման), որին Արմստատը ներկայում ցավոք չի տիրապետում՝ հաշվի առնելով Արմստատին հատկացվող ֆինանսավորման սահմանափակ լինելը: Միաժամանակ, կարևորելով նորարարության վիճակագրական հետազոտության անհրաժեշտությունը, Արմստատը, դրա իրականացումը պահում է ուշադրության կենտրոնում և այդ նպատակով անհրաժեշտ ռեսուրսների առկայության պարագայում կնախաձեռնի և կիրականացնի խնդրո առարկա հետազոտությունը:
5. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան զեկույցների մինչև 2018 թ.-ի հրապարակումներում ներկայացվում էր Տնային տնտեսությունների կրթական և առողջապահական ծախսերն ըստ քվինթիլային խմբերի: Վերջին տարիներին նման տվյալներ չեն հրապարակվում, այնինչ դրանք կարևոր են ոլորտային արդյունավետ վերլուծությունների իրականացման համար, ուստի, առաջարկում ենք հետագա զեկույցներում հրապարակել կրթական և առողջապահական ծառայությունների վրա կատարվող միջին ամսական ծախսը (մեկ չափահաս անձի հաշվով) ըստ քվինթիլային խմբերի, ինչպես	**5. Ընդունվել է:** «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական տարեկան զեկույցներում կհրապարակվեն կրթական և առողջապահական ծառայությունների վրա կատարվող միջին ամսական ծախսն ըստ քվինտիլային խմբերի, ինչպես նաև դրանց մասնաբաժինը սպառողական ծախսերի կառուցվածքում:

նաև դրանց մասնաբաժինը սպառողական ծախսերի կառուցվածքում՝ ըստ քվինթիլների:	
6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղքատությանն առնչվող համակողման վերլուծություններ իրականացնելիս անհրաժեշտություն է առաջանում միաժամանակ հաշվարկներում ներառել Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազան ըստ տնային տնտեսությունների և տնային տնտեսությունների անդամների, առաջարկում ենք ներկայացնել նաև մեկ միասնական տվյալների բազայի տեսքով՝ միավորման հիմք ընդունելով երկու հարցման բազաների դեպքում հարցումների համարը՝ interview__key:	**6. Չի ընդունվել:** Ըստ ՏՏ-ի և ՏՏ անդամների ՏՏԿԱՀ անվանազերծված միկրոտվյալների միասնական բազայի տարածումը Արմստատը նպատակահարմար չի համարում՝ պայմանավորված խնդրո առարկա բազաների կառուցվածքային տարբերություններով: Սակայն, սպառողները վերլուծական նպատակներով կարող են խնդրո առարկա բազաների միավորումը կատարել ինքնուրույն՝ կիրառելով interview_ key նույնատիպը, ինչն առկա է Արմստատի խնդրո առակա բազաներում:
7. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման մեջ «Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ ՏՏ կազմի» վերնագրով աղյուսակում առաջարկում ենք ներառել «2 չափահաս, 1 երեխա» ունեցող տնային տնտեսությունների համար տվյալները, քանի որ վերջիններս տնային տնտեսությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում: Ինչպես նաև վերանայել և ըստ անհրաժեշտության ներկայացնել «Այլ»-ի մեջ մտնող՝ մեծամասնություն կազմող տնային տնտեսությունների վերաբերյալ ցուցանիշները, քանի որ ընդհանուր բնակչության մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում, օրինակ՝	**7. Ընդունվել է:** Աղքատության ցուցանիշներն ըստ ՏՏ կազմի կիրապարակվեն նաև «2 չափահաս, 1 երեխա» կազմով և «Այլ»-ում մեծ մասնաբաժնով ՏՏ կազմի ցուցանիշները:

2022 թ. այն կազմում է ընդհանուր բնակչության 40,6 տոկոսը, իսկ աղքատ բնակչության 46,9 տոկոս (էջ 39, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf), ուստի, կարող ենք գոնե ընդգրկել «Այլ»-ի մեջ մտնող առավել խոշոր մաս կազմող տնային տնտեսությունների վերաբերյալ ցուցանիշները:	
8. Կարելի է հրապարակել առանձին ժողովածուների հակիրճ վիզուալիզացված տարբերակներ, որոնցով մեծածավալ վիճակագրական տեղեկատվությունը կներկայացվի առավել մատչելի և թույլ կտա բավարարել ավելի մեծ շրջանակով շահառուների պահանջարկը վիճակագրական տեղեկատվության նկատմամբ:	**8.Ընդունվել է ի գիտություն:** Վիճակագրական տեղեկություն օգտագործողների կարիքների բավարարման և մեծածավալ տեղեկությունն առավել վիզուալիզացված տարբերակով առավել դյուրին և մատչելի նրանց ներկայացնելու նպատակով՝ սկսած 2021թ.-ից www.armstat.am պաշտոնական կայքի գլխավոր էջում ստեղծվել է «Ինֆոգրաֆիկա» խորագրով բաժին, որի ներքո ներկայացված վիճակագրական ցուցանիշների ինֆոգրաֆիկ պատկերավորումների կազմն ու բովանդակությունը շարունակաբար արդիականացվում և ընդլայնվում է: Դրանցում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի բնութագրերը նկարագրող վիճակագրական ցուցանիշներ մեծամասամբ տարեկան, ինչպես նաև կիսամյակային, եռամսյակային և ամսական հաճախականությամբ:
106. Երևանի պետական համալսարան	
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	

107. Հայաստանի եվրոպական համալսարան	
Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
108. Հայաստանի ազգային ագրարային համալսարան	04.07.2024թ. N Ե/ՀՋ/780-24
Հայաստանի ազգային ագրարային համալսարանը քննարկելով «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի փաթեթը հայտնում է, որ սկզբունքային դիտողություններ չունի: Միաժամանակ առաջարկում ենք, հնարավորություններից ելնելով, «Պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից իրականացվելիք վիճակագրական հետազոտություններ» մասում ներառել նաև հետազոտություններ հետևյալ ուղղություններով. 1. ագրոպարենային ոլորտի կադրային ապահովվածության՝ անդրադառնալով աշխատող մասնագետների տարիքային կազմին,	**1. Ընդունվել է ի գիտություն:** Նախագծով նախատեսված Տնային տնտեսություններում իրականացվող Աշխատուժի **ընտրանքային** հետազոտության **(ԱՀ)** շրջանակում (ծածկագրեր 141001-141016) արտադրում, մշակում և տարածում են տնտեսության ոլորտներով տրոհված զբաղվածության ցուցանիշները: Տնտեսության ոլորտների դասակարգման հիմքը Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչն (ՏԳՏԴ) է՝ դասակարգման «**Բաժնի** (տառի)» մակարդակով: Ըստ այդմ, «ագրոպարենային ոլորտի»՝ ըստ ՏԳՏԴ հավաքական խմբավորման Ձեր կողմից հստակեցման պարագայում, թերևս հնարավոր կլինի ԱՀ շրջանակում տարեկան հաճախականությամբ գնահատել խնդրո առարկա ցուցանիշը՝

	խմբավորված ըստ տարիքային կազմի կամ ԱՀ հարցաթերթի շրջանակում առկա այլ բնութագրերի:
2. ջերմատնային տնտեսությունների գործունեության,	**2. Չի ընդունվել:** Ջերմատնային տնտեսությունների վերաբերյալ տեղեկություններ Արմստատում առկա են, որոնք հրապարակվում են տարեկան պարբերականությամբ, մասնավորապես՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2023 թվականին» տեղեկագրում (տե՛ս https://armstat.am/am/?nid=82&id=2643 հղումը):
3. ինտենսիվ այգեգործության,	**3. Ընդունվել է մասամբ:** ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության վերաբերյալ վիճակագրական տվյալներն Արմստատի կողմից նախատեսվում է հավաքել 2024թ. հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման՝ հոկտեմբերի 11-31-ը ներառյալ, ժամանակ, որոնք կհրապարակեն 2026թ. 4-րդ եռամսյակում:
4. հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրական ծախսերի:	**4. Ընդունվել է ի գիտություն**: Նման հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:

109. Հայ-ռուսական համալսարան	
Չի ներկայացվել	
110. «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ	
Չի ներկայացվել	
111. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան	
Չի ներկայացվել	
112. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	
113. «Արմենպրես» լրատվական գործակալություն ՓԲԸ	
Չի ներկայացվել	
114. «Առկա» լրատվական գործակալություն	
Չի ներկայացվել	

115. «Արմինֆո» լրատվական գործակալություն	
Չի ներկայացվել	
116. «Մեդիամաքս» լրատվական ՍՊԸ	
Չի ներկայացվել	
117. «Նոյյան տապան» լրատվական-վերլուծական կենտրոն	
Չի ներկայացվել	
118. Երևանի քաղաքապետարան	
Չի ներկայացվել	
119. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան	
Չի ներկայացվել	
120. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան	
Չի ներկայացվել	
121. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան	

Չի ներկայացվել	
122. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան	
Չի ներկայացվել	
123. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան	
Չի ներկայացվել	
124. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան	
Չի ներկայացվել	
125. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան	
Չի ներկայացվել	
126. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան	
Չի ներկայացվել	
127. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան	
Չի ներկայացվել	

128. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան	
Չի ներկայացվել	
129. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի անդամ, Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների Հանրային խորհրդի անդամ Արտակ Մանուկյան	22.10.2024թ. Էլեկտրոնային փոստ
1. Հաշվի առնելով մակրոտնտեսական վիճակագրությունում սպասվելիք վերջին փոփոխությունները, քաղաքականություն մշակողների կողմից միկրո տվյալների հանդեպ հետաքրքրությունը, տնտեսական քաղաքականության ներառականության գնահատման անհրաժեշտությունը ինչպես նաև միջազգային փորձը, խնդրում ենք Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաշարում ավելացնել հարցեր՝ կապված ապահովագրական վճարների և ստացված փոխհատուցումների գումարների և քանակների հետ:	**1. Չի ընդունվել**: Խնդրո առարկա ապահովագրական վճարների և ստացված փոխհատուցումների գումարների և քանակների վերաբերյալ տվյալների աղբյուր հանդիսանում են համապատասխան ռեգիստրներ վարող ապահովագրական ընկերությունները, որոնց գործառույթներից են խնդրո առարկա ցուցանիշների հաշվառումներն ու գրանցումները: Ընդ որում, ապահովագրավճարների և ապահովագրական հատուցումների գումարների վերաբերյալ այդ ընկերություններից ստացված տվյալները Կենտրոնական բանկն (ԿԲ) ամփոփում և տրամադրում է Արմստատին, ինչն էլ հրապարակվում է (տե՛ս օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-հուլիսին» տեղեկատվական ամսական զեկույցը՝ https://armstat.am/file/article/sv_07_24a_320.pdf հղմամբ, էջ 114 և «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2023» վիճակագրական ժողովածուն՝ https://armstat.am/am/?nid=82&id=2602 հղմամբ, էջ 61):

2. Ընդլայնել կանաչ տնտեսությանը վերաբերող վիճակագրությունը: Մասնավորապես, առաջարկում ենք ջերմոցային գազերի արտանետումն ըստ նյութերի (CO2 համարժեքներով) ցուցանիշը հրապարակել տարեկան կտրվածքով («2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծում նշվում է, որ ցուցանիշը հավաքագրվում է երկամյա կտրվածքով) և հնարավորինս ավելի թարմ:	**2. Ընդունվել է ի գիտություն:** Ջերմոցային գազերի արտանետումն ըստ նյութերի (CO2 համարժեքով) ցուցանիշի **աղբյուր** հանդիսանում է Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ), որը վարում է Ջերմոցային գազերի կադաստրը և երկամյա հաճախականությամբ հրապարակում համապատասխան զեկույցը, ինչի հիման վրա Արմստատի տվյալների բազայում հրապարակվում են համապատասխան ցուցանիշները, այդ թվում՝ ՇՄՆ-ի կողմից նախորդ տարիների ցուցանիշների վերանայումները (տե՛ս https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb հղումը): Վերջին հրապարակումը, որը հասանելի է Արմստատին, ներառում է 2019թ. ցուցանիշները: 2025թ.-ին նախատեսվում է, որ ՇՄՆ-ի Ջերմոցային գազերի կադաստրում կհրապարակվեն 2020-2021թթ.-ի ցուցանիշները: Միաժամանակ, հարկ է նշել, որ ի օժանդակություն նշված աշխատանքների, Արմստատը ներդրել է նոր վիճակագրական ամփոփ հաշվետվության ձև «Ջերմոցային գազերի արտանետումների մասին» (Ձև 1-ՋԳ/երկամյա), որն ընդգրկվել է «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծում:

3. Հրապարակել ապահովագրված գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վերաբերյալ տեղեկատվություն:	**3. Չի ընդունվել**: Գրության 1-ին հարցի վերաբերյալ ներկայացված պարզաբանումների ներքո:
130. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյան, (Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների Հանրային խորհրդի անդամ Աննա Ժամակոչյան)	22.10.2024թ. N ՍՄ/ԱՀ/32923-2024
1. 123-րդ էջի 38-րդ տողով նախատեսված «Ձև 1-Նպաստ» հաշվետվությունը, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների մասով, անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմամբ պայմանավորված, անհրաժեշտ կլինի փոխել: 2. 160-րդ էջում՝ «Գյուղատնտեսություն և պարենային ապահովություն» բաժինն առաջարկում ենք 2025 թվականի ընթացքում քննարկել, որը պայմանավորված է անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման շրջանակներում գյուղեկամուտների (հողօգտագործում և անասնապահություն) հաշվարկման FAO-ի կողմից մշակվող մեթեդաբանությամբ: Անհրաժեշտ կլինի հավաքագրել համապատասխան տեղեկատվություն (էջ 207, տողեր 179-185, նույնը Երևանի մասով): 3.184-8d էջի 132-134 տողերով նախատեսված՝ «բնակարանային պայմաններ» բաժնում, առաջարկում ենք քննարկել սոցիալական բնակֆոնդին վերաբերող տվյալների ներառում՝ շենք-շինությունների վթարայնության հետ կապված տվյալների հավաքագրման հնարավորությունը և այլն (էջ 207, տող՝ 186, նույնը Երևանի մասով)	**Ընդունվել է ի գիտություն:** Առաջարկությունները վերաբերում են 2025թ.-ի ընթացքում Արմստատի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ապագա գործունեությանը վերաբերող քննարկումներին: Արմստատը հայտնում է իր պատրաստակամությունը մասնակցելու այդպիսի քննարկումներին՝ ըստ նախարարության կողմից ներկայացված հայցերի:

Առաջարկությունները վերաբերում են 2025 թվականի ընթացքում քննարկվելիք հարցերին, որոնցով պայմանավորված գուցե և փոփոխություններ կատարվեն 2026 թվականի ծրագրում:	
131. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների Հանրային խորհրդի անդամ Նարեկ Հովակիմյան	28.10.2024թ. N Մ/2072-24
ՀՀ վիճակագրական կոմիտեի առարկությունների առնչությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հայտնում է հետևյալը: 1. **Պաշտոնական վիճակագրական հաշվետվությունների հավաքման առցանց հարթակին (ՀԱՐԹԱԿ) միանալու առաջարկ:** **ՀՀ վիճակագրական կոմիտեի առարկության առնչությամբ** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ևս մեկ անգամ շեշտում է տնտեսական (այդ թվում՝ առավելապես արդյունաբերության ոլորտի) քաղաքականությունների մշակման գործընթացում համապատասխան վերլուծությունների ու գնահատումների համար արդյունաբերական կազմակերպությունների վերաբերյալ ՀԱՐԹԱԿՈՒՄ առկա տեղեկատվության հասանելիության կարևորությունը: Ընդունելով գաղտնիության սկզբունքի առկայությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը վստահեցնում է, որ մուտքի արտոնությամբ հասանելի տեղեկատվությունը նախարարության կողմից ամբողջությամբ կիրառվելու է ներքին օգտագործման համար: **Որևէ կազմակերպության անվանում և/կամ նույնականացման հնարավորություն ունեցող ցուցանիշ**	**1. Չի ընդունվել**: Արմստատն Էկոնոմիկայի նախարարությանը Հարթակին մուտքի հնարավորություն չի կարող տրամադրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված «Վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման» սկզբունքի համաձայն: Ըստ որի, պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով: Վերջինս խարսխված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վիճակագրական հանձնաժողովի կողմից 1994 թ.-ի ապրիլի 14-ին ընդունված (29.01.2014թ. ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից վերահաստատված, 68/261-րդ Բանաձև) ՄԱԿ-ի «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից» 6-րդ սկզբունքի վրա, ըստ որի՝

վերլուծական և հաշվետվողական փաստաթղթերում նախարարության կողմից չի հրապարակվելու: Ելնելով վերոգրյալից՝ ևս մեկ անգամ խնդրում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել ՀԱՐԹԱԿԻ մուտքի թույլատվություն: Ընդ որում, հայտնում ենք, որ ԱՐՄՍՏԱՏԻ համաձայնության դեպքում, մուտքի թույլատվություն նախարարության կողմից առաջարկվելու է տրամադրել միայն երկու ստորաբաժանման (արդյունաբերության քաղաքականության վարչության, տնտեսական հետազոտությունների վարչության) 1-ական աշխատակցի:	«Վիճակագրական տեղեկատվության պատրաստման համար վիճակագրական գերատեսչությունների կողմից հավաքագրվող անհատական տվյալները, անկախ այն հանգամանքից, թե դրանք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետք է կրեն խիստ գաղտնի բնույթ և օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակների համար»:
2. **«1.2.2 Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն» կետի 122002 աշխատանքի ծածկագրի շրջանակում և** 1.2.2 (Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն) կետի «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնում **տրամադրվող տեղեկատվության առնչությամբ** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն, հիմք ընդունելով ԱՐՄՍՏԱՏԻ 2024թ. հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցաթերթով տվյալների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվությունը, **չի առարկում 2025 թվականի ծրագրում նախարարության առաջարկության չներառումը**:	**2. Չի ընդունվել:** ՀՀ-ում 2024թ. հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) անցկացման ժամանակ հավաքվելու են գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի, ըստ առանձին տեսակների, միայն ցանքատարածությունների և տարածությունների վերաբերյալ տվյալներ, որոնք արտացոլված են ՀՀ կառավարության 23.05.2024թ. N 730-Ն որոշմամբ հաստատված 2024թ. հերթական ԳՀՀ ծրագրում (հարցաշարում): ԳՀՀ-ով, ըստ միջազգային մեթոդաբանության, չի նախատեսվում հավաքել տեղեկություններ մշակաբույսերի արտադրության և բերքատվության ծավալների մասին: ԳՀՀ-ի հիմնական արդյունքների հրապարակումը նախատեսված է 2026թ.-ին, հետևաբար խնդրո առարկան չի առնչվում «2025 թվականի

Այնուամենայնիվ, կրկին խնդրում ենք, վերոնշյալ համատարած հաշվառման տվյալների հրապարակման ժամանակ, ելնելով նախարարության վերլուծությունների և գնահատումների համար անհրաժեշտ ցուցանիշերի բացվածքի, <u>անպայման</u> հրապարակել նախարության կողմից առաջարկվող բացվածքով, այն է՝ • «Պտղատու այգիների, հատապտղանոցների (ներառյալ ջերմոցներ և ջերմատներ) և խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնի մեջ պտուղ և հատապտուղների վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորության դեպքում ներկայացնել նաև ըստ առանձին հիմնական մշակաբույսերի և ըստ մարզերի, մասնավորապես հնդավորներ՝ խնձորենի, տանձենի, սերկևիլենի և այլն, կորիզավորներ՝ ծիրանենի, դեղձենի, նեկտարենի, սալորենի, բալենի ու կեռասենի և այլն, ընկուզապտուղների՝ ընկուզենի, տխիլենի, նշենի, պիստակենի: • 1.2.2 (Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն) կետի «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնում ներկայացնել նաև կորիզավոր և հնդավոր պտղատեսակների վերաբերյալ տեղեկատվության բացվածքը՝ ներառելով ծիրանենու, դեղձենու, սալորենու, կեռասենու, խնձորենու և տանձենու վերաբերյալ առանձնացված տվյալներ:	վիճակագրական ծրագրի» նախագծին: Ընդ որում, Ձեր կողմից հայցվող բազմամյա տնկարկների տարածություններն ըստ հնդավորների, կորիզավորների, մերձարևադարձայինների, ընկուզապտուղների և դրանց առանձին տեսակների ցուցանիշները նախատեսվում է հրապարակել ԳՀՀ արդյունքներով:

132. Արդարադատության նախարարություն	04.12.2024թ. N Մ/2317-24
1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Նախագծի 7.6.1 կետի, որով ի թիվս այլնի, առաջարկվում է տրամադրել վիճակագրական տվյալներ Ծառայության անձնակազմի վերաբերյալ, մասնավորապես՝ ա) 7.6.1-ին կետի 2-րդ ենթակետ՝ աշխատուժի վրա գործատուի կատարած ծախսերի վերաբերյալ ըստ Երևան քաղաքի և մարզերի, գ) 7.6.1-ին կետի 4-րդ ենթակետ՝ ավտոմոբիլային տրանսպորտի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության վերաբերյալ: Հարկ է նշել, որ Նախագծի նման ձևակերպումները խիստ անորոշ են, բացի այդ պարզ չէ, թե ինչ նպատակների համար են դրանք հավաքագրվում: Ըստ այդմ, Նախագծի հետագա կիրարկումն ապահովելու և հետագայում Ծառայության կողմից ներկայացվելիք վիճակագրական տվյալները պատշաճ տրամադրելու համար անհրաժեշտ է հստակեցնել վերը նշված կետերը: Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ Ծառայությունը կարող է տրամադրել տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի՝ ըստ ծառայության տեսակի (հարկադիր կատարողներ և այլ հանրային ծառայողներ Երևան քաղաքում և մարզերում), վերջիններիս վարձատրության, աշխատաժամերի, մասնագիտական ուսուցումների, ինչպես նաև Ծառայությունում առկա տրանսպորտային միջոցների վերաբերյալ:	**1.Չի ընդունվել:** ա. Նախագծի 7.6.1. կետի 2-րդ ենթակետի վերաբերյալ (էջ 228). «Աշխատողների թվաքանակի, վարձատրության, աշխատած ժամերի, աշխատողի վրա գործատուի կատարած ծախսերի մասին» ձև 1-Ա (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևով հավաքվող ցուցանիշների շրջանակը միջազգային համապատասխան ստանդարտներով, դասակարգումներով սահմանված ցուցանիշների համակարգ է՝ տեղայնացված ըստ ազգային առանձնահատկությունների և երկրի ոլորտային քաղաքականության կարիքների: Ըստ այդմ՝ հաշվետվությամբ հավաքվող տվյալները /ելքային ցուցանիշներն անհրաժեշտ են ոչ միայն ազգային կարիքների, այլ նաև միջազգային պարտավորությունների կատարման երկրի հաշվետվողականության համար: Աշխատուժի վրա գործատուի կատարած ծախսերի վիճակագրության նպատակն է գնահատել միավոր աշխատուժի օգտագործման համար գործատուների կատարած ընդհանուր ծախսերը, ինչը կարևոր է՝ հասկանալու համար հայաստանյան աշխատաշուկայում աշխատանքի արժեքի (գնագոյացման) չափը, կառուցվածքը և շարժընթացը՝ հօգուտ տարբեր տնտեսական և քաղաքական նպատակների: Այդ նպատակների համատեքստում անհրաժեշտ է նաև պատկերացում կազմել աշխատանքի գնի ոլորտային և

	աշխարհագրական բաշխվածության առանձնահատկությունների մասին: Վերոնշյալ վիճակագրական հաշվետվության ձևով պահանջվող տվյալների հաշվարկման և լրացման կարգը ներկայացված է այստեղ: բ. Նախագծի 7.6.1. կետի 4-րդ ենթակետի վերաբերյալ (էջ 228). Տրանսպորտի ոլորտի գործունեության վերաբերյալ ցուցանիշների ամբողջականությունն ապահովելու նպատակով սույն առաջարկությունը չի ընդունվել:
2. Քրեակատարողական ծառայություն Նախագծի 50-րդ կետով ներկայացված տեղեկատվությունը (ավտոմոբիլային տրանսպորտը և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը) հնարավոր չէ տրամադրել, քանի որ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության ավտոմոբիլային տրանսպորտները հատուկ և հատուկ գործառնական նշանակություն և «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն հանդիսանում են սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն:	**2. Չի ընդունվել:** Նախագծի 7.6.2 կետի 4-րդ ենթակետի վերաբերյալ (էջ 229). Առաջարկությունն ընդունելի չէ այն հիմնավորմամբ, որ վիճակագրական արտադրանքների մշակման, արտադրության, ու տարածման գործընթացներում չափազանց կարևոր է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վիճակագրական գաղտնիքի սկզբունքի պահպանումը (տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755 հղումը), միաժամանակ հաշվի առնելով խնդրո առարկա ցուցանիշների տրամադրման կարևորությունը, Արմստատն առաջարկում է «Ավտոմոբիլային տրանսպորտը և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը» 1-տրանսպորտ (տարեկան)

	վիճակագրական հաշվետվության ձևը տրամադրել գաղտնիության ռեժիմն ապահովող ստորաբաժանման միջոցով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ